

ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

2019
N 3 (49)

Գիտական հանդես

Հրատարակվում է 2008 թվականից

Լույս է տեսնում տարեկան 2-4 անգամ

Հիմնադիր և հրատարակիչ՝ «Իրավական կրթության և վերականգնողական
ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Գլխավոր խմբագիր՝ Աշոտ Հայրապետյան - իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Վերատպելը միայն հանդեսի խմբագրության թույլտվությամբ:

Խմբագրության կարծիքը միշտ չէ, որ համընկնում է հեղինակների կարծիքի հետ:

Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը

պատասխանատվություն չի կրում:

Հեղինակային նյութերը վերանայվում են և չեն վերադարձվում:

«Արդարադատություն» գիտական հանդեսն ընդգրկված է Հայաստանի
Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած
դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական
հրատարակությունների ցուցակում:

Խմբագրության հասցեն՝ 375008, ք. Երևան, Մ. Խորենացու 162ա,
հեռախոս՝ 574483

Ֆաքս՝ 574453 էլ. կայք՝ www.ardadatutyunjournal.com

Հանձնված է տպագրության 31.10.2019թ.

Տպագրությունը՝ լագերային-թվային, ֆորմատ A4:

Տպաքանակը՝ 100 օրինակ:

Լրատվական գործունեություն իրականացնող «Իրավական կրթության

և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Հասցեն՝ ք. Երևան, Մ. Խորենացու 162ա

Գրանցման վկայական - N 278.210.03426, գրանցված ՀՀ արդարադատության
նախարարության պետական ռեգիստրի Էլեկտրոնու տարածքային բաժնի կողմից:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝

EDITORIAL BOARD

Սրբուհի Գալյան – Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ, խմբագրական խորհուրդի նախագահ:

Srbuhi Galyan – (President) Deputy minister of Justice of the Republic of Armenia.

Աշոտ Հայրապետյան – «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ տնօրեն, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, գլխավոր խմբագիր:

Ashot Hayrapetyan – “Legal Education and Rehabilitation Programs’ Implementation Center” SNCO, PhD in Law, Associate Professor, Chief editor.

Արտակ Ասատրյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու:

Artak Asatryan – PhD in Law.

Հրանուշ Հակոբյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Hranush Hakobyan – Doctor of Law, Professor.

Արմեն Հարությունյան – Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Armen Harutyunyan – Judge at the European Court of Human Rights, Doctor of Law, Professor.

Աշոտ Խաչատրյան – Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Ashot Khachatryan – Judge at the Constitutional Court of the Republic of Armenia, Doctor of Law, Professor.

Վլոդյա Հովհաննիսյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ:

Volodya Hovhannisyan – Doctor of Law, Associate Professor.

Արմեն Եսայան – Հայաստանի Հանրապետության արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Armen Yesayan – Third Class State Advisor of Justice of the Republic of Armenia, Doctor of Law, Professor.

Գրիգոր Բադիրյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր:

Grigor Badiryan – Doctor of Law.

Ստեփան Ծաղիկյան – Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Stepan Tsaghikyan – Head of Criminal and Criminal Procedural Law of the Law and Politics Department of the Russian-Armenian (Slavonic) University, Doctor of Law, Professor.

Սերգեյ Առաքելյան – «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Sergey Arakelyan – Rector of “Academy of Justice” SNCO, Doctor of Law, Professor.

Ռուզաննա Հակոբյան – «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ:

Ruzanna Hakobyan – Rector of “Gavar State University” Fund, Doctor of Law, Associate Professor.

Ժորա Ջհանգիրյան – «Գլաձոր» համալսարանի ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Zhora Jhangiryan – Rector of “Gladzor” University, Doctor of Law, Professor.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ռուբեն Ավագյան – «Մանց» համալսարանի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Ruben Avagyan – Rector of “Mane” University, Doctor of Law, Professor.

Արփիհն Հովհաննիսյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ:

Arpine Hovhannisyan – PhD in Law, Associate Professor.

Սուրեն Բրնոյան – ՀՀ փոխվարչապետի խորհրդական, իրավաբանական գիտությունների թեկնածու:

Suren Krmoyan – Adviser to Deputy Prime Minister, PhD in Law.

Սերգեյ Հայրապետյան – Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Sergey Hayrapetyan – Doctor of Historical Sciences, Professor.

Աշոտ Ենգոյան – ԵՊՀ-ի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Ashot Engoyan – Head of Chair/Faculty of International Relations-Chair of Theory and History of Political Sciences of YSU, Doctor of Political Sciences, Professor.

Գարիկ Բեռյան – ԵՊՀ-ի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Garik Keryan – Head of Chair/Faculty of International Relations-Chair of Political Institutions and Processes of YSU, Doctor of Political Sciences, Professor.

Մուշեղ Հովսեփյան – ԵՊՀ-ի ժուռնալիստիկայի ֆակուլտետի տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Mushegh Hovsepyan – Head of Chair of Printed and Broadcast Media of YSU, Doctor of Philological Sciences, Professor.

Էդուարդ Ղազարյան – Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:

Eduard Ghazaryan – Acting Dean of the Faculty of Agribusiness and Economics of National Agrarian University of Armenia, Doctor of Economics, Professor.

Օտարերկրյա անդամներ

International members

Հայկ Կուպելյանց – Իրավաբանական գիտությունների թեկնածու:

Hayk Kupelyants – PhD in Law.

Ալեքսանդր Կրիմով – Ռուսաստանի Դաշնության պատիժների իրականացման դաշնային ծառայության իրավունքի և կառավարման ակադեմիայի պետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ներքին ծառայության գեներալ-մայոր:

Alexander Krymov - Chief of the Academy of Law Management of the Federal Penitentiary Service of Russia, DSc in Law, Professor, Major General of Internal Service.

Անդրեյ Սկիբա – Ռուսաստանի Դաշնության պատիժների իրականացման դաշնային ծառայության իրավունքի և կառավարման ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետի քրեակատարողական իրավունքի ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ներքին ծառայության մայոր:

Andrey Skiba – Head of Chair of Criminal and Executive Right of Legal Faculty of the Academy of Law and Administration of the Federal Penitentiary Service of the Russian Federation, Doctor of Legal Sciences, Associate Professor, Major of Internal Service.

Եվգենի Բարաշ – Ոսկրահայի ներքին գործերի ազգային ակադեմիայի քրեակատարողական ծառայության ինստիտուտի պետ, ներքին ծառայության գեներալ-մայոր, իրավաբանական

գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ:

Ievhen Barash – Head of the Criminal and Penal Service Institute of National Academy of Internal Affairs of Ukraine, Major General of Internal Service, Doctor of Law, Professor, Honored Worker of Science and Technology of Ukraine.

Հենրիկ Լինդերբորգ – Ֆինլանդիայի արդարադատության նախարարության քրեական պատիժների վարչության ավագ գիտաշխատող, սոցիալական գիտությունների դոկտոր:

Henrik Lindeborg – Senior Researcher at the Criminal Punishment Department of the Ministry of Justice of Finland, Doctor of Social Sciences.

Նիկիտա Իվանով – Համառուսական արդարադատության պետական համալսարանի քրեական իրավունքի և կրիմինալոգիայի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Nikita Ivanov – Head of the Chair of Penal Right and Criminology Doctor of Legal Sciences, Professor of the All-Russian State University of Justice.

Սերգեյ Չերնյավսկի – Ուկրաինայի ներքին գործերի Ազգային ակադեմիայի պրոռեկտոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, ոստիկանության գնդապետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Sergey Chernyavsky – Vice Rector of the National Academy of Internal Affairs of Ukraine, Honored Worker of Science and Technology of Ukraine, Police Colonel, Doctor of Legal Sciences, Professor.

Վադիմ Վինոգրադով – Համառուսական արդարադատության պետական համալսարանի սահմանադրական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Vadim Vinogradov – Head of the Chair of Constitution and International Right, Doctor of Legal Sciences, Professor of the All-Russian State University of Justice.

Վլադիմիր Գուրեն – Համառուսական արդարադատության պետական համալսարանի քաղաքացիական դատավարության և դատական կարգադրիչների ծառայության կազմակերպման ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ:

Vladimir Gureev – Head of the Chair of Civil Process and Organization of Service of Bailiffs Doctor of Legal Sciences, Associate Professor of the All-Russian State University of Justice.

Կոնստանտին Գուսարով – Յարոսլավ Մուդրիի անվան ազգային իրավաբանական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Konstantin Gusarov – Head of the Chair of Civil Process of the Yaroslav Mudryi National Law University, Doctor of Legal Sciences, Professor.

Վիտալիյ Ստուկանով – Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիայի հոգեբանության և մանկավարժության ամբիոնի պետ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ:

Vitaly Stukanov – Head of Department of Psychology and Pedagogy of the Academy of the Interior Ministry of the Republic of Belarus, Doctor of Pedagogical Sciences, PhD in Psychological Sciences, Associate Professor.

Ալեքսանդր Ռուբիս – Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Aleksandr Rubis – Professor of the Chair of Criminal Process of the Academy of Interior Ministry of the Republic of Belarus, Doctor of Legal Sciences, Professor.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՆԻ

Արմեն Օհանյան (պատասխանատու քարտուղար), Միլվա Արիստակեսյան (տեխնիկական խմբագիր), Անուշ Հայրումյան (սրբագրիչ), Սամվել Աբրահամյան

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 6 ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ
ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ՇՈՒՇԱՆԻԿ ԴՈՒԿԱՍՅԱՆ
Հանրագիր ներկայացնելու իրավունքի իրացման որոշ հիմնախնդիրների շուրջ
- 15 ՄԱՆՈՒԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ
Սուբյեկտիվ իրավունքի չարաշահման հարցերը եվրոպական դատարանի
նախադեպային իրավունքում
- 22 ՎԱՀԵ ԹՈՐՈՍՅԱՆ
Աշխարհիկ պետության քրիստոնեական ընկալումը և դավանանքի ազատությունը
- 27 ՄՈՒՇԵՂ ԲԱԲԱՅԱՆ
Մասնավոր կյանքի իրավունքի ձևավորման և զարգացման
պատմատեսական նախադրյալները
- 35 ՍԻՐԱՆՈՒՇ ՄԵԼԻՔՅԱՆ
Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների իրավական կարգավորման
հիմնահարցը Հայաստանի Հանրապետությունում
- 43 НАТАЛЬЯ БАЙДОВА
ОЛЫГА ГРИШИНА
ЭДГАР БАЛЯН
АРМЕН ОГАНЯН
Нормативно-правовое обеспечение трудовой деятельности осужденных
в пенитенциарных службах России и Армении

ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ

ՀՀ փոխվարչապետի խորհրդական,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի դոկտորանտ

ՇՈՒՇԱՆԻԿ ԳՈՒԿԱՍՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական
իրավունքի ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ՀԱՆՐԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՅՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Հոդվածում ներկայացվել է հանրագրի ինստիտուտի դերը և նշանակությունը, վերլուծվել են հանրագրերի բնույթի հարցը, հանրագրերի ինստիտուտի ոչ արդյունավետ կիրառման պատճառները, ներկայացվել են առկա խնդիրների լուծմանն ուղղված առաջարկներ:

Հիմնաբառեր- հանրագիր, հանրագիր ներկայացնելու իրավունք, հանրագրի բնույթ:

Գրականության մեջ հանրային իշխանության մարմիններին դիմելու ինստիտուտը բնորոշվում է որպես ինքնուրույն, համալիր իրավական ինստիտուտ, որի հիման վրա ամրագրվում է իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով անձի՝ անհատապես կամ կոլեկտիվ կարգով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմելու իրավունքը: Հանրագիր ներկայացնելու իրավունքի պատմական ծագումը հաճախ կապվում է Մեծ Բրիտանիայի 1215 թվականի Ազատությունների Մեծ Խարտիայի (Magna Carta Libertatum) հետ, իսկ որոշ տեսաբաններ գտնում են, որ դրա ծագումը անհրաժեշտ է թվագրել առավել վաղ ժամանակների՝ այն դիտարկելով քաղաքական իշխանության գոյության հետ միաժամանակ²: Հանրագրի իրավունքն առաջին անգամ ամրագրվել է 1791 թվականի Ֆրանսիայի Սահմանադրությամբ: Հետագայում արևմտյան պետությունների համադրությամբ հանրագրի իրավունքը ներկայանում է իբրև պետության և հասարակության գործերում մարդկանց և քաղաքացիների մասնակցությունն իրականացնելու ձև, ինչպես նաև քաղաքական և իրավական որոշումների ընդունման գործընթացների վրա անհատների կամ մարդկանց խմբերի ազդելու եղանակ³: Հանրագրի ինստիտուտի գլխավոր նպատակն է ժողովրդավարության ամրապնդումը, ներկայացնողների և ներկայացվողների միջև հեռավորության կրճատումը, թափանցիկության և տեղե-

կատվական հոսքի ապահովումը⁴:

Հանրագրի ինստիտուտը կարևոր նշանակություն ունի պետություն-քաղաքացի արդյունավետ հարաբերությունների հաստատման և ամրապնդման, հանրային նշանակության հարցերում և դրանց հետ կապված որոշումների ընդունման գործընթացում հասարակության մասնակցության խթանման, հասարակության իրավագիտակցության բարձրացման, մասնակցային ժողովրդավարության ամրապնդման տեսանկյունից: Մասնագիտական գրականության մեջ պատահական չէ, որպես ժողովրդավարության առանցքային հատկանիշ, անհատի համար ինքնաարտահայտման և ինքնադրսևորման հնարավորությունների երաշխավորման և վերջինիս արժեքորման պահանջի իրացման առանձնացումը⁵: Հաշվի առնելով հանրագիր ներկայացնելու ինստիտուտի կարևորությունը՝ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգով ընդգծվում էր, որ երկրի կայուն սահմանադրական զարգացումների համար էական նշանակություն ունի անմիջական ժողովրդավարության ներուժի լիարժեք օգտագործման հնարավորությունների բացահայտումը և ներկայացուցչական ժողովրդավարության ներուժի հետ դրա խելամիտ ներդաշնակումը: Ըստ այդմ՝ որպես սահմանադրաիրավական կանոնակարգումների խնդիր էր առաջադրվում հանրային պետիցիայի (հանրագրի) ինստիտուտի արդյունավետ գործադրումը:

2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում Սահմանադրության 2-րդ գլխում որպես անձի հիմնական իրավունք առանձնացվեց հանրագիր ներկայացնելու իրավունքը: Այդուհանդերձ, գրականության մեջ արտահայտված տեսակետի համաձայն՝ այս հոդվածը կրկնում է 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 27.1-րդ հոդվածը՝ որոշակի հստակեցումներով: Այսինքն՝ նշված տեսակետի համաձայն՝ «Հանրագրի» ինստիտուտը 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրությամբ ամրագրված «Առաջարկություն կամ դիմում» ներկայացնելու ինստիտուտի կրկնությունը կամ տրանսֆորմացիան է: Այսպես, 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 27.1-րդ հոդվածը սահմանում էր, որ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրության վերը նշված հոդվածով՝ որպես նշված հիմնական իրավունքի կարևորագույն բաղադրատարր, առանձնացվում էր՝

1) դիմում և առաջարկություն ներկայացնելը. ընդ որում՝ ներկայացվող դիմումի (առաջարկության) շարժառիթ կարող էր հանդիսանալ ինչպես անձնական, այնպես էլ՝ հասարակական շահի պաշտպանությունը (այլ կերպ ասած՝ անձը կարող էր դիմել ինչպես անձամբ իր, այնպես էլ այլոց իրավունքների պաշտպանության նպատակով):

2) Ներկայացված դիմումի վերաբերյալ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալը, ինչը ենթադրում է դիմումի (առաջարկության) քննության հանգամանքների առանձնահատկությունների հաշվառմամբ դրա քննության տևողության ողջամտություն և դիմումի պատասխանի փաստական և իրավական հիմքերի պատշաճ հիմնավորման առկայություն:

2015 թվականի սահմանադրական փոփոխություններով՝ Սահմանադրության 53-րդ հոդվածով հանրագիր ներկայացնելու իրավունքի ամրագրման արդյունքում յուրաքանչյուր անձի հնարավորություն ընձեռվեց հանրագիր ներկայացնել ինչպես անհատապես, այնպես էլ այլոց հետ համատեղ, և ամրագրվեց նաև հանրագրի վերաբերյալ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու կարևորությունը: Ի տարբերություն 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 27.1-րդ հոդվածի, որում ուրվագծվում էր դիմում (առաջարկ) ներկայացնելու պարագայում անձնա-

կան կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառում հետապնդելու հանգամանքը, 2015 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 53-րդ հոդվածում անդրադարձ է կատարվում ոչ թե հանրագրի ներկայացման արդյունքում հետապնդվող նպատակին, այլ դրա ներկայացման կարգին. այլ կերպ ասած՝ անհատապես կամ կոլեկտիվ կարգով հանրագիր ներկայացնելուն, իսկ հանրագրի այլ մանրամասների սահմանումը՝ համաձայն նույն հոդվածի, վերապահված է օրենքին:

Հաշվի առնելով նաև հիմնական իրավունքների արդյունավետ իրականացման անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի սահմանման Սահմանադրության 75-րդ հոդվածով սահմանված պահանջը՝ 2017 թվականի դեկտեմբերի 21-ին ընդունված «Հանրագրերի մասին» ՀՀ օրենքով՝ հստակեցվեց հանրագրի բովանդակությունը, սահմանվեց հանրագրերը ներկայացնելու կարգը, կարգավորում ստացան հանրագրի ինստիտուտի հետ կապված այլ հարցեր:

Հաշվի առնելով հանրագրի ինստիտուտի դերը և նշանակությունը, կարևորելով հանրագիր ներկայացնելու իրավունքի արդյունավետ իրացման բոլոր նախադրյալների ապահովումը՝ հարկ ենք համարում անդրադառնալ այն խնդրի վերլուծությանը, թե ինչ բնույթ պետք է ունենա հանրագիրը՝ վերլուծելով դրա մասնավոր կամ հասարակական շահերի պաշտպանության նպատակ հետապնդելու հարցը:

Հարկ է նշել, որ հանրագրեր ներկայացնելու ինստիտուտը գործում է Եվրոպական միության գրեթե բոլոր երկրներում: Հանրագրերը, որպես կանոն, ներկայացվում են օրենսդիր մարմնին գրավոր ձևով¹²: Հանրագրերի ներկայացումը օրենսդիր չի նշանակում, որ դրանց շրջանակում կարող են ներկայացվել միայն օրենսդիր մարմնի իրավասությանը վերաբերելի հիմնահարցեր: Հանրագրերով կարող են ներկայացվել նաև գործադիր կամ այլ մարմինների լիազորություններին առնչվող հարցեր, որոնց կապակցությամբ օրենսդիր կարող է իրացնել վերահսկողական բնույթի գործառնություններ. օրինակ՝ գրավոր, բանավոր հարցերով կամ այլ եղանակով գործադիր իշխանության մարմիններին դիմելը: Հանրագրերով ներկայացվող առաջարկների կամ պահանջների բնույթի կապակցությամբ պետությունների որդեգրած մոտեցումները ևս տարբեր են:

Այսպես, գրականության մեջ նշվում է, որ Եվրոպական միության անդամ երկրների մեծ մասում անձանց տրված է հնարավորություն հանրագրով բարձրացնել ինչպես մասնավոր, այնպես էլ հասարակական նշանակության հարցեր: Կան երկրներ, որտեղ հնարավորություն է ընձեռված հանրագրով բարձրացնել միայն օրենսդիր մարմնի իրավասու-

թյանն անմիջականորեն առնչվող կամ այլ կերպ ասած՝ հանրային նշանակության հարցեր (օրինակ՝ Շոտլանդիա, Լյուքսեմբուրգ, Մեծ Բրիտանիա, Իտալիա, Ավստրիա, Չեխիա): Գրականության մեջ արտահայտված տեսակետի համաձայն՝ հանրային նշանակության հարցերին վերաբերելի հանրագրերը օրենսդրին հնարավորություն են տալիս առավել արդյունավետ արձագանքել դրանց՝ օրենսդիր կամ հսկողական գործառնությունների իրացման միջոցով, իսկ մասնավոր հանրագրերը առավելապես քննվում են օմբուդսմենի կամ դատական իշխանության կողմից: Ըստ այդմ, մասնավոր հարցերին վերաբերելի հանրագրերի ներկայացումը դիտարկվում է որպես հանրագիր ներկայացնելու իրավունքի պատմական մնացորդ, որով սուվերենին ներկայացվում էր մասնավոր գործի կապակցությամբ գթասրտություն դրսևորելու խնդրանք: Այս կապակցությամբ նշվում է, որ վերը նշվածը, ակնհայտորեն, այլևս հանրագրեր ներկայացնելու ինստիտուտի գլխավոր ֆունկցիան չէ, քանի որ անհատական հանրագրերը, սովորաբար, քննվում են օմբուդսմենի կամ դատարանի կողմից՝

Հանրագրերի բնույթի վերաբերյալ տարբեր երկրների իրավական կարգավորումների վերլուծությունը ցույց է տալիս, որ առանձին դեպքերում օրենսդրորեն հատուկ շեշտադրվում է՝ հանրագրի հանրային նշանակության որևէ հարցին առնչվելու կամ հանրային կարիքներին վերաբերելի լինելու հանգամանքը: Ուշադրության է արժանի նաև այն, որ հաճախ երկրների հիմնական օրենքում (կամ այլ ակտերում) նշվում է ոչ թե հանրագիր, այլ «դիմումներ, բողոքներ» ներկայացնելու վերաբերյալ՝ դա դիտարկելով հանրագրի ինստիտուտի շրջանակում:

Այսպես, օրինակ Իտալիայի օրենսդրությամբ սահմանվում է, որ յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի ներկայացնել հանրագիր օրենսդրական միջոցառումներ ձեռնարկելու կամ հանրային այլ կարիքների համար: Սլովենիայում ընդգծվում է՝ հանրագիր ներկայացնելու դեպքում դրանց հանրային նշանակություն ունենալու կամ այլ՝ ընդհանուր շահ ներկայացնելու հանգամանքը: Խորվաթիայի օրենսդրությամբ ևս ամրագրված է, որ յուրաքանչյուր անձ՝ անհատապես կամ այլոց հետ համատեղ, կարող է ներկայացնել հանրագիր, որն ունի հանրային կամ այլ՝ ընդհանուր հետաքրքրություն¹⁴: Առկա են նաև երկրներ, որտեղ նշվում է միայն իրավասու մարմիններին դիմում, բողոք կամ հանրագիր ներկայացնելու մասին՝ առանց մատնանշելու հանրագրի բնույթին առաջադրվող պահանջները: Օրինակ՝ Գերմանիայի Սահմանադրության (հիմնական օրենք) 17-րդ հոդվածը, մվիրված լինելով հանրագիր ներկայացնելու իրավունքին,

սահմանում է, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի անհատապես կամ այլոց հետ համատեղ իրավասու մարմիններին կամ օրենսդիր մարմնին ներկայացնելու գրավոր դիմում կամ բողոք¹⁵: Բելգիայի օրենսդրությամբ ամրագրվում է յուրաքանչյուր անձի պետական մարմիններին հանրագրի ներկայացնելու իրավունքը: Համանման է մոտեցումը նաև Լյուքսեմբուրգում, Նիդեռլանդներում, Դանիայում¹⁶:

Անդրադառնալով ՀՀ-ում հանրագրերի բնույթին, խնդրին՝ պետք է նշել, որ «Հանրագրերի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին կետով¹⁷ հանրագրի բովանդակության համար նախանշվել են որոշակի ուղղություններ: Այսպես, հանրագիրը կարող է վերաբերել լինել՝

- 1) հանրային նշանակություն ունեցող հարցի,
- 2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության թերություններին, վերջիններիս գործունեության բարելավմանը,
- 3) տնտեսական, քաղաքական, սոցիալական և հասարակական կյանքի այլ ոլորտների վերաբերող հարցերի կարգավորմանը,
- 4) գործող իրավակարգավորումների կատարելագործմանը:

Մենք այն տեսակետին ենք, որ, Օրենքի ներկայիս խմբագրությամբ, հարցի հանրային նշանակություն ունենալը պարտադիր չէ հանրագրերի ներկայացման բոլոր դեպքերում, և հանրագրի բովանդակությունը կարող է վերաբերել լինել նաև մասնավոր նշանակության խնդրի: Այսպես, Օրենքով իրավասու մարմինների գործունեության թերության, վերջիններիս գործունեության բարելավման, հասարակական կյանքի որևէ ոլորտի կարգավորման կամ իրավակարգավորման կատարելագործմանն ուղղված առաջարկների դեպքում՝ չի առաջադրվում դրանց հանրային նշանակության որևէ հարց պարտադիր շոշափելու պահանջ¹⁸: Գործող իրավակարգավորման պարագայում կարծում ենք՝ խնդրահարույց կարող է լինել մասնավոր նշանակության հարց շոշափող հանրագրերի ներկայացման դեպքում դրանց հստակ տարանջատումը այլ հարաբերությունների շրջանակներում ներկայացվող դիմումներից, օրինակ՝ վարչական վարույթի հարցման հիմք հանդիսացող դիմումներից կամ օրինակ՝ կոլեկտիվ հանրագրով իրավակարգավորման առաջարկ ներկայացնելու պարագայում Սահմանադրության 109-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունքի իրացումից¹⁹:

Չնայած Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով

սահմանվում է, որ, եթե որպես հանրագիր ներկայացված գրությունը պարունակում է վարչական վարույթ հարուցելու հիմք հանդիսացող դիմում կամ բողոք, ապա վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինը այն առանձնացնում և ընթացք է տալիս օրենքով սահմանված կարգով, այնուամենայնիվ, հարկ է նշել, որ մասնավոր նշանակության հարց շոշափող հանրագիրը ինքնին կարող է հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու հիմք: Օրինակ՝ անձը ներկայացնում է վարչարարություն իրականացնող որևէ մարմնի գործունեության թերության մասին դիմում՝ միաժամանակ պահանջելով քայլեր ձեռնարկել դրանց վերացման կապակցությամբ: Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իրավակարգավորման լույսի ներքո մնան դիմումը հանրագիր է, քանի որ այն պետական մարմնի գործունեության թերության մասին հաղորդում է: Բացի այդ, այն կարող է թերությունների մատնանշման հետ միաժամանակ պարունակել նաև դրանք վերացնելու պահանջ, քանի որ Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ հանրագրով անձը կարող է ներկայացնել որոշակի միջոցառումներ ձեռնարկելու պահանջ: Այս պարագայում խնդրահարույց է Օրենքի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի հստակ հարաբերակցության և կիրառելիության հարցը: Մասնավորապես, հարց կարող է առաջանալ, թե արդյո՞ք այս պարագայում կիրառելի են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կարգավորումները (վարույթի մասին ծանուցում, լուծումներ, վարույթի նյութերի մատչելիություն և այլն), թե՞ բավարար է միայն ողջամիտ ժամկետում հանրագրին պատշաճ պատասխան տալը կամ, օրինակ՝ Օրենքի 1-ին հոդվածով որպես հանրագիր է դիտարկվում գործող իրավակարգավորումների կատարելագործման վերաբերյալ առաջարկը, և, միաժամանակ, հնարավորություն է ընձեռնվում ներկայացնել կոլեկտիվ հանրագիր (երկու և ավելի անձանց միևնույն հարցով ներկայացված հանրագիր): Ենթադրենք՝ առնվազն 50 հազար քաղաքացի կոլեկտիվ հանրագրով ներկայացնում են իրավակարգավորման կատարելագործման վերաբերյալ առաջարկ. այս պարագայում ծագում է հանրագրի և քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ ներկայացնելու իրավունքի իրացման ինստիտուտների հարաբերակցության հարցը: Այլ կերպ ասած՝ ներկա կարգավորումներով, որպես դրանց տարանջատման չափանիշ, կարող է ծառայել միայն իրավակարգավորման կատարելագործման վերաբերյալ առաջարկի ներկայացման ընթացակարգային առանձնահատկությունների հաշվառումը, քանի որ, եթե օրենքի նախագիծը ներկայացվի

«Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքով²⁰ սահմանված կարգով՝ «Ազգային ժողովի կանոնակարգ»²¹ սահմանադրական օրենքով օրենսդրական նախաձեռնության համար սահմանված պահանջներին համապատասխան, ապա դրան ընթացք կտրվի որպես քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագծի ներկայացում, քանի որ հանրագրերի ներկայացման դեպքում մնան պահանջներ չեն առաջադրվում: Ստացվում է, որ գործող իրավակարգավորման համատեքստում դրանց տարանջատման հիմքում կարող է դրվել միայն ոլորտային հարաբերությունները կարգավորող ակտերի ընթացակարգային առանձնահատկությունները սահմանող դրույթների ֆորմալ պահպանումը, այլ ոչ թե ներկայացված առաջարկի բնույթը և դրանով շոշափող հարցերի շրջանակը: Մենք կարծում ենք, որ հանրագրերի²² տարանջատման տեսանկյունից, որպես առանցքային չափանիշ, անհրաժեշտ է դիտարկել դրանց հանրային նշանակության հարց շոշափելու հանգամանքը, և հանրագրի ներկայացման պարագայում անձը չպետք է ակնկալի իր սուբյեկտիվ իրավունքների իրացման և պաշտպանության ակտի ընդունումը: Այս տեսանկյունից, կարծում ենք, պատահական չէ նաև Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգով «հանրային»²³ պետիցիայի ինստիտուտի գործադրման գաղափարի շեշտադրումը: Ըստ այդմ, գտնում ենք, որ Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում հարցի հանրային նշանակություն ունենալու շեշտադրումը պետք է կատարվի հանրագրերի ներկայացման բոլոր դեպքերի համար: Բացի այդ, գործող իրավակարգավորման թերություններից է նաև այն, որ չնայած Օրենքի 1-ին հոդվածում սահմանված է հանրագրի հասկացությունը՝ ուղենշելով հանրագրով շոշափող հարցերի շրջանակը, այնուամենայնիվ, ո՛չ հանրագրերի վերադարձման, ո՛չ դրանց քննարկումը մերժելու հիմքերի շրջանակում չի նախատեսվում ներկայացված առաջարկության՝ Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասին չհամապատասխանելու հանգամանքը: Կարծում ենք՝ ներկայացված առաջարկության՝ Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասին չհամապատասխանելը ևս պետք է հիմք ծառայի հանրագրի քննարկումը մերժելու համար: Յավոք, պետք է արձանագրել, որ, չնայած հանրագրերի ինստիտուտի ներդրմանը, այն ՀՀ-ում դեռևս արդյունավետ չի գործում, որի վկայությունն է նաև հանրագրերի ներկայացման վիճակագրությունը: Այսպես, մեր կողմից իրավասու մարմիններ ուղարկված հարցման²⁴ արդյունքում պատկերը հետևյալն է՝

Մարմին	Օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված հանրագրերի ընդհանուր թիվ	Հանրագրի հակիրճ էություն	Հանրագրի քննարկման արդյունքում կայացված որոշում կամ այլ նշումներ
ՀՀ վարչապետի աշխատակազմ ²⁵	1 (կոլեկտիվ հանրագիր)	Բարձրացվել են պարզեցման, թափուր պաշտոնների համար անցկացվող մրցույթների և անձնակազմի տվյալներին վերաբերող հիմնահարցեր:	Հանրագիրը ուղարկվել է Արդարադատության նախարարություն և Պետական եկամուտների կոմիտե: Արդարադատության նախարարության առաջարկով հանրագիրը նախատեսվում է քննարկել կառավարության հանրագրերի հարցերով հանձնաժողովի կողմից, որի ձևավորումը նախատեսվում է առաջիկայում:
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ²⁶	0		Այլ նշումներ - Նախարարության պատասխանի համաձայն՝ 2018թ.-ից մինչ օրս ստացվել է 20 առաջարկություն, բայց դրանք չեն կարող դիտարկվել որպես հանրագիր, քանի որ հանրագրերի ներկայացման համար պարտադիր է «Հանրագիր» վերտառությունը, իսկ ներկայացված առաջարկություններում չի պահպանվել Օրենքի պահանջը:
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ²⁷	1	Բարձրացվել է մասնակի թոշակի իրավունք ունեցող մանկավարժական աշխատողների հարցը, ներկայացվել է առաջարկ ՀՀ կառավարության 14.10.2010 թվականի թիվ 1391-Ն որոշման N 4 հավելվածով հաստատված անվանացանկը լրացնել «խմբակի ղեկավար» կամ «երաժշտական խմբակի ղեկավար» պաշտոնով:	Նախարարությունը պատասխան է ներկայացրել այն մասին, որ շրջանառության մեջ են դրված «Հանրակրթության մասին» և «Կրթության մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագծերը, արդյունքում՝ փոփոխություններ կլինեն նաև դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերում, որոնց համատեքստում քննարկման առարկա կդառնա նաև դիմողի առաջարկությունը:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն ²⁸	0		Այլ նշումներ - Նախա- րարության պատասխա- նի համաձայն՝ 2018 թվականի հունվարի 1-ից առ 2019 թվականի օգոս- տոսի 23-ը գրանցվել է 274 բողոք և 151 առա- ջարկություն:
ՀՀ տարածքային կառա- վարման և ենթակառուց- վածքների նախարարու- թյուն ²⁹	0		
ՀՀ արդարադատության նախարարություն ³⁰	2	Ներկայացվել է ամուս- նալուծությունը բացա- ռապես ՔԿԱԳ մարմնում իրականացնելու վերա- բերյալ առաջարկ: Առա- ջարկվել է օրենսդրորեն սահմանել «քաղաքա- կան բանտարկյալ» հաս- կացությունը՝ ԵԽԽՎ-ի նորմերին համապա- տասխան:	Մշակվել է «Ընտանեկան օրենսգրքում փոփոխու- թյուն և լրացում կատա- րելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ: Դիմումատուն տեղեկաց- վել է, որ այդ հասկացու- թյունը սահմանելու նպատակահարմարու- թյան հարցի ուսումնա- սիրությունը նախատես- վել է իրականացնել մարդու իրավունքների պաշտպանության ազ- գային ռազմավարությու- նից բխող 2017-2019 թվականների գործողու- թյունների ծրագրի շրջա- նակներում:

Աղյուսակից բխում է, որ իրավասու մարմիններ հանրագրեր ներկայացնելու դեպքերը խիստ սա-
կավաթիվ են: Տրամադրված տեղեկությունը ցույց է
տալիս, որ հաճախ անձանց կողմից ներկայացվում
են «առաջարկություններ», որոնք չեն դիտարկվում
որպես հանրագիր՝ այն պատճառաբանությամբ, որ
չեն պարունակում «Հանրագիր» վերտառությունը
(իրավասու մարմինների կողմից չի ներկայացվել
նաև տեղեկություն այն մասին, թե արդյոք նման
առաջարկությունները պետական մարմինների
կողմից հետ են վերադարձվում՝ Օրենքի 8-րդ հոդ-
վածի հիման վրա թերությունները շտկելու համար):
Որպես հանրագրի ինստիտուտի կիրառման դրա-
կան փորձ կարելի է վկայակոչել ՀՀ արդարադա-
տության նախարարության կողմից հանրագրի
ներկայացման արդյունքում ՀՀ ընտանեկան
օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարե-
լուն ուղղված նախագծի մշակումը: Պետք է արձա-

նագրել, որ հանրագրերի ինստիտուտի ոչ պատշաճ
կիրառումը բավականաչափ խնդրահարույց է, քա-
նի որ հանրագրերով պետական մարմինների
(ինչպես նաև ՏԻՍ) չդիմելը նվազեցնում է նշված
ինստիտուտի դերը և նշանակությունը. փաստացի
անտեսվում է մի կարևորագույն գործիք, որի միջո-
ցով անձինք հնարավորություն ունեն մասնակցել
պետական կառավարմանը և վստահություն ձեռք
բերել հանրային իշխանության նկատմամբ: Կար-
ծում ենք՝ հանրագրերի կիրառման ոչ բավարար
մակարդակը կարող է պայմանավորված լինել մի
շարք հանգամանքներով: Վստահաբար կարելի է
պնդել, որ քաղաքացիները բավարար չափով տեղե-
կացված չեն հանրագրերի ինստիտուտի հնարավո-
րությունների և մեխանիզմների վերաբերյալ, առկա
է հասարակության իրավագիտակցության շարու-
նակական բարձրացման և այս ուղղությամբ գոր-
ծուն քայլեր ձեռնարկելու, պետական մարմինների

շրջանակում հանրագրի ինստիտուտի դերի և կարևորության գաղափարի արմատավորման, ինչպես նաև վերջիններիս կողմից դրա արդյունավետ գործունեության ապահովմանն ուղղված

հետևողական քայլեր ձեռնարկելու անհրաժեշտություն:

¹ Տե՛ս, Попов И.Е., Институт права граждан на обращения в органы власти: проблемы понятия и принципиальные особенности, Вестник Южно-Уральского государственного университета, Серия:Право, 2009, N 6, стр. 92:

² Տե՛ս, Tiago Tiburcio, The Right to Petition, Directorate-General for internal policies, Policy Department C, Citizens' rights and constitutional affairs, 2015, p. 6, հասանելի է՝ [http://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2015/519223/IPOL_STU\(2015\)519223_EN.pdf](http://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2015/519223/IPOL_STU(2015)519223_EN.pdf) հղումով՝ 20.08.2019թ. դրությամբ:

³ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյանի և Ա.Վաղարշյանի խմբ., Եր., Իրավունք հրատ., 2010, էջ 316:

⁴ Տե՛ս, Tiago Tiburcio, նշված աշխատությունը, էջ 16:

⁵ Տե՛ս, Ա. Մանասյան, Սահմանադրական կայունությունը՝ որպես կայուն ժողովրդավարության կարևորագույն գրավական, Երևան, Հայրապետ հրատ., 2019, էջ 23:

⁶ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2014, էջեր՝ 60-61:

⁷ Տե՛ս, ՀՀ Սահմանադրություն, ընդունվել է 05.07.1995 թվականին, փոփոխվել է 27.11.2005 թվականին (ՀՀՊՏ 2005.12.05/ Հատուկ թողարկում հոդ. 1426-րդ) և 06.12.2015 թվականին (ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում հոդ. 1118-րդ):

⁸ Տե՛ս, Վ.Պողոսյան, Ն.Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, Եր., Տիգրան Մեծ, 2016, էջ 67:

⁹ Նշված հոդվածով ամրագրվեց, որ յուրաքանչյուր ոք ունի անհատապես կամ այլոց հետ մեկտեղ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց հանրագիր ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով:

¹⁰ Այդ թվում՝ Սահմանադրության 53-րդ հոդվածով նախատեսված հանրագիր ներկայացնելու իրավունքի իրացման մանրամասների սահմանման պահանջը:

¹¹ Ընդունվել է 21.12.2017թ., ուժի մեջ է մտել 27.01.2018թ., ՀՀՊՏ 2018.01.17/4(1362) հոդ. 33:

¹² Տե՛ս, Tiago Tiburcio, նշված աշխատությունը, էջ 13:

¹³ Տե՛ս, Tiago Tiburcio, նշված աշխատությունը, էջ 23:

¹⁴ Տե՛ս, Сергеева Д.А., Европейский опыт конституционного закрепления института обращений граждан, Пробелы в российском законодательстве. Юридический журнал, 2016, N 7, стр. 69-70:

¹⁵ Տե՛ս, Basic Law for the Federal Republic of Germany, հոդված 17-րդ, հասանելի է՝ https://www.btg-bestellservice.de/pdf/80201000.pdf?fbclid=IwAR1eBR_gpLYLSqKtZA6pVFUsPDzODdTGil3YynMH1Pa8wHiFhnVxC7glnZo հղումով՝ 28.08.2019թ. դրությամբ:

¹⁶ Տե՛ս, Сергеева Д.А., Европейский опыт конституционного закрепления института обращений граждан, Пробелы в российском законодательстве. Юридический журнал, 2016, N 7, стр. 69:

¹⁷ Նշված հոդվածի համաձայն՝ հանրագիրը, Սահմանադրության 53-րդ հոդվածի հիման վրա, հանրային նշանակություն ունեցող հարցերով ներկայացվող գրություն է կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության թերությունների մասին հաղորդում կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության բարելավման, տնտեսական, քաղաքական, սոցիալական և հասարակական կյանքի այլ ոլորտների վերաբերող հարցերի կարգավորման կամ գործող իրավակարգավորումների կատարելագործման վերաբերյալ առաջարկություն:

¹⁸ Ասվածը, իհարկե, չի բացառում նաև նմանատիպ առաջարկների հանրային նշանակություն ունենալու հանգամանքը (օրինակ՝ իրավասու մարմինների գործունեության բարելավմանն ուղղված առաջարկները):

¹⁹ Սահմանադրության 109-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ընտրական իրավունք ունեցող առնվազն հիստոն հազար քաղաքացի ունի Ազգային ժողովին քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք: «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 65-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական նախաձեռնությունն իրականացվում է «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանված կարգով՝ Կանոնակարգով օրենսդրական նախաձեռնության համար սահմանված պահանջներին համապատասխան:

²⁰ Ընդունվել է 23.03.2018թ., ուժի մեջ է մտել 09.04.2018թ., ՀՀՊՏ 2018.03.28/23(1381) հոդ. 348-րդ:

²¹ Ընդունվել է 16.12.2016թ., ուժի մեջ է մտել 18.05.2017թ., ՀՀՊՏ 2017.01.25/5(1280) հոդ. 45-րդ:

- ²² Ուշադրության է արժանի մաս այն, որ արդի հայերենի բացատրական բառարանում «հանրագիր» բառը ևս նշանակում է ամբողջ ազգաբնակչության կամ բնակչության որևէ խավի կողմից կազմված գրություն: Այդ մասին տես Աղայան Է.Բ., Արդի Հայերենի Բացատրական բառարան, Երևան, Հայաստան հրատ., 1976, էջ 821:
- ²³ Օրենքի շրջանակում ևս կարևորվել է հանրային շահերի պաշտպանությունը, որի արտահայտությունն է դրա 5-րդ հոդվածի 12-րդ մասով նախատեսված այն կարգավորումը, որ անկախ հանրագիրը հետ վերցնելու կամ կոլեկտիվ հանրագրից հրաժարվելու մասին դիմումից՝ հանրագիրը ենթակա է քննարկման, եթե հանրագրի քննարկումն էական նշանակություն ունի հանրային շահերի պաշտպանության տեսանկյունից:
- ²⁴ Հարցումները ուղարկվել են <https://www.e-request.am/hy/> կայքի միջոցով:
- ²⁵ Տե՛ս, ՀՀ վարչապետի աշխատակազմի N 14/14.7/39406-2019թ. գրությունը:
- ²⁶ Տե՛ս, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 27.08.2019թ. N ՍՄ/16584-2019 գրությունը:
- ²⁷ Տե՛ս, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 28.08.2019թ. N 04/23/1794619 գրությունը:
- ²⁸ Տե՛ս, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության 29.08.2019թ. N 5/07.2/52582 գրությունը:
- ²⁹ Տե՛ս, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 29.08.2019թ. N 02/1327h/12571-19 գրությունը:
- ³⁰ Տե՛ս, <http://www.moj.am/article/2091>, հասանելի է 16.09.2019թ. դրությամբ, ՀՀ արդարադատության նախարարության 23.09.2019թ. 21618-19 գրությունը:

Օգտագործված գրականության ցանկ

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Գ.Հարությունյանի և Ա.Վաղարշյանի խմբ., Եր., Իրավունք հրատ., 2010:
- Ա.Մանասյան, Սահմանադրական կայունությունը՝ որպես կայուն ժողովրդավարության կարևորագույն գրավական, Երևան, Հայրապետ հրատ., 2019:
- Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2014:
- Վ.Պողոսյան, Ն.Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, Եր., Տիգրան Մեծ, 2016:
- Աղայան Է.Բ., Արդի Հայերենի Բացատրական բառարան, Երևան, Հայաստան հրատ., 1976:
- ՀՀ վարչապետի աշխատակազմի N 14/14.7/39406-2019թ., ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 27.08.2019թ. N ՍՄ/16584-2019, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 28.08.2019թ. N 04/23/1794619, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության 29.08.2019թ. N 5/07.2/52582, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 29.08.2019թ. N 02/1327h/12571-19, ՀՀ արդարադատության նախարարության 23.09.2019թ. 21618-19 գրությունները:
- Сергеева Д.А., Европейский опыт конституционного закрепления института обращений граждан. Пробелы в российском законодательстве, Юридический журнал, 2016, N 7.
- Попов И.Е., Институт права граждан на обращения в органы власти: проблемы понятия и принципиальные особенности, Вестник Южно-Уральского государственного университета, Серия: Право, 2009, N 6.
- Tiago Tiburcio, The Right to Petition, Directorate-General for internal policies, Policy Department C, Citizens' rights and constitutional affairs, 2015.
- 10 Basic Law for the Federal Republic of Germany, 23.05.1949.

Сурен Крмоян
Советник вице-премьера РА,
кандидат юридических наук

Ашот Айрапетян
Кандидат юридических наук, доцент, докторант
академии государственного управления РА

Шушаник Гукасян
Преподаватель кафедры гражданского права ЕГУ,
кандидат юридических наук

РЕЗЮМЕ

Некоторые вопросы, касающиеся осуществления права на петицию

В статье исследована роль и значение института петиций, проанализированы сущность петиций, причины неэффективного использования петиций, представлены предложения по решению существующих проблем.

Ключевые слова: петиция, право на петицию, сущность петиций.

Suren Krmoyan
Adviser to Deputy Prime Minister,
PhD in law

Ashot Hayrapetyan
PhD in Law, Associate Professor,
Doctoral Candidate of Public Administration Academy of RA

Shushanik Ghukasyan
Lecturer of the Chair of Civil Law of YSU,
PhD in Law

SUMMARY

Certain issues regarding the exercising of the right to petition

The article explored the role and significance of the institute of petitions, analyzed the nature of petitions, the reasons of inefficient use of petitions, suggestions for solving existing problems were presented.

Keywords: petition, the right to petition, nature of petition.

Բնագիրը ներկայացվել է 17.09.2019թ.

Ընդունվել է տպագրության 23.09.2019թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Վ. Քոչարյանը

ՄԱՆՈՒԿ ՍՈՒՐԱԴՅԱՆ

ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության պետ,
ոստիկանության գնդապետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

**ՍՈՒՐՅԵԿՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ
ՀԱՐՑԵՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ**

Սուբյեկտիվ իրավունքի չարաշահման և վերջինիս դեմ պայքարի հիմնահարցը ժամանակակից իրավագիտության արդիական և քիչ հետազոտված թեմաներից է, ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում: Սույն գիտական հոդվածի ուսումնասիրման առարկան սուբյեկտիվ չարաշահման արգելքն է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում: Հոդվածը բաղկացած է երկու մասից, որոնցում համապատասխանաբար դիտարկվում են ՄԻԵԿ 17-րդ հոդվածով սահմանված կոնվենցիոն իրավունքների չարաշահման արգելքը (մաս 1-ին) և ՄԻԵԿ 35-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետով սահմանված անհատական զանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահման արգելքը (մաս 2-րդ):

Հիմնաբառեր – սուբյեկտիվ իրավունք, չարաշահում, ՄԻԵԿ, ՄԻԵԴ, նախադեպային իրավունք:

Ընդհանուր դրույթներ: Սուբյեկտիվ իրավունքի չարաշահման էության և դրա դեմ պայքարի գործիքակազմի ընտրության հարցում իրավաբանական գրականության մեջ միատեսակ մոտեցումը բացակայում է: Գոյություն ունեցող հետազոտությունների ծանրակշիռ մեծամասնությունը հիմնահարցը դիտարկում է ազգային իրավունքի մակարդակով: Այս իմաստով առավել քան արդիական է սուբյեկտիվ իրավունքի չարաշահման հետազոտումը միջազգային իրավունքում: Այստեղ պետք է ելնել հետևյալ թեզից՝ «Որտեղ գոյություն ունի սուբյեկտիվ իրավունքը, այնտեղ հնարավոր է կողմերի կողմից վերջինիս չարաշահումը»: Սույն գիտական հոդվածի հետազոտության առարկան է՝ սուբյեկտիվ իրավունքի չարաշահման արգելքը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայում (այսուհետ՝ ՄԻԵԿ) և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում (այսուհետ՝ ՄԻԵԴ):

Նկատենք, որ ՄԻԵԿ-ը ճանաչում է սուբյեկտիվ իրավունքի չարաշահման արգելքի երկու ինստիտուտ՝ (1) ՄԻԵԿ 17-րդ հոդվածով սահմանված կոնվենցիոն իրավունքների չարաշահման արգելքը և (2) ՄԻԵԿ 35-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետով սահմանված անհատական զանգատ ներկա-

յացնելու իրավունքի չարաշահման արգելքը:

ՄԻԵԿ 17-րդ հոդվածի իմաստով կոնվենցիոն իրավունքների չարաշահման արգելքը սուբյեկտիվ իրավունքի չարաշահման համատեքստում: ՄԻԵԿ 17-րդ հոդվածի համաձայն՝ Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել այնպես, որ որևէ պետություն, անձանց խումբ կամ որևէ անձ իրավունք ունենա զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված լինի Կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքի և ազատության վերացմանը կամ դրանց սահմանափակմանն ավելի մեծ չափով, քան նախատեսված է Կոնվենցիայով: Կոնվենցիոն այս նորմը նպատակ ունի բացառելու ծայրահեղական խմբավորումների, անձերի կողմից իրենց գործողությունների արդարացումը՝ հենվելով Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և պետության կողմից՝ դրանց միջամտելու կոնվենցիոն չափանիշների շրջանցման վրա: Ակնհայտ է, որ ՄԻԵԿ 17-րդ հոդվածը պետք է մեկնաբանվել լայն իմաստով՝ դրա տակ հասկանալով և՛ անձերի ու խմբերի կողմից սուբյեկտիվ իրավունքների չարաշահման, և՛ պետության կողմից հանրային իրավական լիազորության չարաշահման արգելքի ինստիտուտները*:

*ՄԻԵԿ 17-րդ հոդվածի դեֆինիտիվ ձևակերպումից (Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել այն իմաստով, թե որևէ պետություն ... իրավունք ունի զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված է սույն Կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքի և ազատության վերացմանը կամ դրանց սահմանափակմանը ավելի մեծ չափով, քան նախատեսված է Կոնվենցիայով) ակնհայտ է դառնում, որ այն ոչ միայն ունի սուբյեկտիվ իրավունքի չարաշահման արգելքի գործառույթ, այլ նաև՝ հանրային իրավական լիազորության: Հաշվի առնելով հոդվածի առարկան (սուբյեկտիվ իրավունքի չարաշահման և վերջինիս արգելքի հիմնահարցը)՝ նրա պետության կողմից հանրային իրավական լիազորության չարաշահման խնդիրը սույն աշխատանքի շրջանակներում չի ներկայացվելու:

Քննարկվող նորմի փաստակազմի հատկանիշներից երևում է, որ 17-րդ հոդվածի կիրառության ներքո կարող են հայտնվել այնպիսի իրավիճակները, երբ չարաշահումներն ուղղված են հատկապես ՍԽԵԿ-ով երաշխավորված իրավունքների էության ոչնչացմանը:

Ավելին, ՍԽԵԿ նախաբանում սահմանված է, որ ՍԽԵԿ-ը *նպատակ ունի ապահովելու այնտեղ հռչակված իրավունքների համընդհանուր և արդյունավետ ճանաչումն ու պահպանումը, իսկ «Մարդու իրավունքները հարգելու պարտականությունը» վերտառությամբ 1-ին հոդվածը սահմանում է. «Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի 1-ին բաժնում»:* Այստեղ հարց է առաջանում՝ ՍԽԵԿ 17-րդ հոդվածը կիրառելի է միայն այն իրավունքների վրա, որոնք նախատեսված են Կոնվենցիայում և կից արձանագրություններում, թե՞ կարևորելով մարդու իրավունքների պաշտպանության կոնվենցիոն առաքելությունը՝ խնդրին պետք է տալ լայն մեկնաբանություն՝ չսահմանափակելով 17-րդ հոդվածի ազդեցությունը հայտնի շրջանակներով:

Իրավունքների չարաշահման արգելքի կոնվենցիոն մեխանիզմը կիրառելի է ոչ միայն փաստաթղթով և (կամ) կից արձանագրություններով երաշխավորված իրավունքների սահմանափակման դեպքերում, այլև՝ ՍԽԵԿ-ի մեկնաբանությունների արդյունքում կոնվենցիոն իրավունքների պաշտպանության առարկայի տիրույթում ներառված իրավագործությունների հնարավոր չարաշահումների վերաբերությամբ: ՍԽԵԿ-ը իր պրակտիկայով հաստատում է, որ հակված չէ՝ ՍԽԵԿ-ով երաշխավորված իրավունքների ցանկը սպառնալիք համարել, և կոնվենցիոն նորմերի էվոլյուտիվ մեկնաբանման (evolutive interpretation) կանոնը հնարավորություն է ընձեռում դատարանին ընդլայնել վերջիններիս բովանդակությունը [1]: ՍԽԵԿ-ում տրված են մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական համակարգի չափորոշիչները, որոնք որոշակիացվում են՝ ՍԽԵԿ-ի կոնվենցիոն նորմերը մեկնաբանելու գործառնության արդյունքում: Կոնվենցիոն նորմերը, ինչպես նշում է ՍԽԵԿ-ի իրավախորհրդատու Միքելե դե Սալվիան, արժեքներ են, որոնք ցույց են տալիս եվրոպական իրավակարգի միջուկը [2]: ՍԽԵԿ-ի ՍԽԵԿ-ի նորմերի էվոլյուտիվ մեկնաբանման գործառնությունն ուղղված է կոնվենցիոն իրավունքի զարգացմանը, որի նպատակն է դրանք համապատասխանեցնել ժամանա-

կի պահանջներին [3]:

Շարունակելով ՍԽԵԿ 17-րդ հոդվածի ազդեցության վերաբերյալ դիտարկումները՝ հակված ենք այն իրականացնել ՍԽԵԿ-ի նախատեսյալին իրավունքի վերլուծության հիման վրա. ՍԽԵԿ 17-րդ հոդվածը դատարանի կողմից ենթակա է կիրառման, եթե կոնվենցիոն իրավունքի կրողն իրավունքն օգտագործել է տվյալ իրավունքի առաջնային գործառնության չափորոշիչ չբխող, այլ նպատակների համար: Հատկանշական է, որ ՍԽԵԿ-ի իրավական դիրքորոշումը, 17-րդ հոդվածի կիրառման հետևանքի հետ կապված՝ դրսևորվում է կոնվենցիոն իրավունքի պաշտպանությունը մերժելով: ՍԽԵԿ 17-րդ հոդվածը, օգտագործելով կոնվենցիոն իրավունքների պաշտպանությունը, նպատակ ունի կոնվենցիոն իրավունքի կրողին թույլ չտալ դրսևորել այնպիսի վարք կամ զբաղվել այնպիսի գործունեությամբ, որն ուղղված է այդ իրավունքի էության խեղմանը և (կամ) վերացմանը [4]:

Հատկանշական է, որ ՍԽԵԿ-ը, գնահատելով 17-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ միջնորդությունը, անհրաժեշտաբար պետք է ուշադրություն դարձնի այնպիսի արժեքների [5] վնասմանը, որոնք ընկած են Կոնվենցիայի հիմքում: Այդ շարքում առանձնացվում են՝ արդարությունն ու խաղաղությունը [6], արդյունավետ ժողովրդավարությունը [7], միջազգային վեճերի խաղաղ լուծման առաքելությունը [8], հանդուրժողականությունը, սոցիալական արդարությունը և խտրականության արգելքը [9], գենդերային հավասարությունը [10] և հասարակության լայն շրջանակների գոյակցությունը, ռասայական սեգրեգացիայի բացառումը [11] և այլն:

Հաշվի առնելով քննարկվող կոնվենցիոն նորմի նպատակը (բացառելու ծայրահեղական խմբավորումների, անձերի կողմից իրենց գործողությունների արդարացումը) և գնահատելով ՍԽԵԿ-ի հիմնահարցի հետ կապված պրակտիկան՝ արձանագրում ենք, որ այն, առաջին հերթին, վերաբերելի է ՍԽԵԿ 10-րդ (Արտահայտվելու ազատություն) և 11-րդ (Հավաքների և միավորման ազատություն) հոդվածներով երաշխավորված իրավունքների չարաշահման արգելքին:

Պակասան ընդդեմ Լիտվայի և Լեհիդյուքսն ու Իսորնին ընդդեմ Ֆրանսիայի (ՄՊ) (Paksas v. Lithuania և Lehideux and Isorni v. France) գործերի շրջանակում ՍԽԵԿ-ը 17-րդ հոդվածը դիտարկում է որպես գենը՝ ուղղված այնպիսի գործողություններին, որոնք հակոտնյա են Կոնվենցիայի տեքստին և ոգուն [12]: Հատկանշական է, որ հոդվածի կիրառման տիրույթում հայտնվել են այնպիսի գոր-

ծեր, որոնցում պետության միջամտությունը Կոնվենցիայով երաշխավորված է: Այսպիսով՝ 10-րդ և 11-րդ հոդվածներն արդարացվում են 17-րդ հոդվածի գործառնությամբ: Մասնավորապես, դրանք վերաբերել են կոմունիստական գաղափարախոսության պրոպագանդային, անձանց կամ խմբերի հակաժողովրդավարական նպատակներին, ցեղասպանության (մասնավորապես Հոլոքոստի) մերժմանը, ռասայական կամ խտրական այլ ձևերի արդարացմանը և այլն:

Այսպես, Մարդու իրավունքների հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) մերժեց գերմանական իշխանությունների կողմից կոմունիստական կուսակցության գործունեության արգելքի հետ կապված կուսակցության կողմից ներկայացված բողոքը: Մասնավորապես, Ֆեդերալ կառավարության բողոքի հիման վրա [13] Գերմանիայի Մահմանադրական դատարանը 1956 թվականի օգոստոսի 17-ին կոմունիստական կուսակցությունը ճանաչել էր հակասահմանադրական և արգելել էր վերջինիս գործունեությունը [14]: Հատկանշական է, որ իշխանությունները, հետագայում նաև Հանձնաժողովը, հաստատեցին կուսակցության ծրագրային նպատակների անհամապատասխանությունը Մահմանադրությանը և կոնվենցիոն նորմերին:

Հանձնաժողովը բավարարելով Գերմանական իշխանությունների միջնորդությունը ՄԻԵԿ 17-րդ հոդվածի կիրառման վերաբերությամբ՝ ընդգծեց, որ պրոլետարիատի պահանջները չեն բխում ՄԻԵԿ նպատակներից և ենթադրում են ՄԻԵԿ-ով երաշխավորված իրավունքների էության խեղում: Հանձնաժողովը հաստատեց Գերմանական իշխանությունների մտահոգությունը կոնվենցիոն իրավունքների չարաչափման հարցում [15], ընդգծելով, որ կոնվենցիոն իրավունքների պաշտպանություն կարող են ակնկալել միայն դեմոկրատական ինստիտուտները և որ քաղաքական նշված միավորի նպատակները որևէ աղերս չունեն ժողովրդավարության և մարդու իրավունքների հետ, իսկ նրանց անդամները կոչված են ոչնչացնելու այդ արժեքները՝ նույնաբովանդակ հիմնավորումներով: Հանձնաժողովը նաև ՄԻԵԿ-ը հաստատեցին իրենց գնահատականները Գյունեքն ընդդեմ Գերմանիայի և Գլախներվանը և ագենթակն ընդդեմ Նիդերլանդների գործում:

Մեկ այլ Հանս Յորգ Շիմանեկն ընդդեմ Ավստրիայի գործով դիմումատու նաև հանդիսանում էր պրոնացիստական խմբի ղեկավարը, ով կազմակերպված հավաքների ժամանակ տարածում էր ֆաշիզմի գաղափարախոսությունը՝ փառաբանելով 3-րդ ռեյխի քաղաքականությունը, նա հերքում էր

նշված գաղափարախոսության բռնի լինելը և, առհասարակ, ֆաշիզմի ներկայացուցիչների կողմից մարդկության դեմ ուղղված հանցագործությունների կատարման փաստերը, Ավստրիայի Գերագույն դատարանի կողմից դատապարտվել էր 8 տարի ազատազրկման: ՄԻԵԿ-ին ուղղված դիմումով Շիմանեկը պնդում էր, որ առկա է ոչ իրավաչափ միջամտություն ՄԻԵԿ-ի 3-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներում: Վերացարկվելով կոնվենցիոն մյուս իրավունքների հնարավոր խախտման վերաբերյալ ՄԻԵԿ դիրքորոշումից՝ փաստենք, որ Դատարանը ընդգծեց, որ չի կարող ՄԻԵԿ 10-րդ հոդվածն օգտագործվել իր էությանը հակառակ՝ դրանով փաստելով, որ դիմումատու հետապնդել է 17-րդ հոդվածի նպատակները և այդ հիմքով եկավ եզրակացության, որ ավստրիական իշխանությունների գործողությունները իրավաչափ են եղել և ժողովրդավարական հասարակության համար՝ պիտանի: Այսպիսով, դիմումատուի՝ ՄԻԵԿ-ով պաշտպանվելը չի բխում այդ իրավունքի էությունից [16]:

Ինչպես նշվել է, ՄԻԵԿ 17-րդ հոդվածը կիրառվել է նաև նացիստական, ցեղասպանությունների հերքման դեպքերում՝ գնահատելով դիմումատուի գործողությունները նյութական իրավունքի չարաչափման կոնտեքստում:

Այսպես, Գարաուդին ընդդեմ Ֆրանսիայի գործի շրջանակներում, որը վերաբերում էր դիմումատուի գրքում Հոլոքոստի հերքմանը, ով ենթարկվել էր ֆրանսիական իշխանությունների կողմից քրեական պատասխանատվության, Դատարանը 17-րդ հոդվածը ևս կիրառել էր զանգատի ընդունման փուլում: Դատարանն ընդգծեց, որ գրքի նպատակը եղել է Հոլոքոստի փաստը պատմական սխալ համարելը, պատմական փաստերը խեղելը, հրեաների նկատմամբ ազգային, ռասայական ատելություն քարոզելը, ինչը ենթակա չէ պաշտպանության կարծիքի ազատության իրավունքով (ՄԻԵԿ 10-րդ հոդված) [17]:

Նկատենք, որ 17-րդ հոդվածի կիրառման դեպքում, զուտ իրավական ամրագրման իմաստով, հստակություն չկա թե այն կիրառվում է զանգատի ընդունելության, թե՛ գործն ըստ էության քննելու փուլերում: Ընդգծվում է, որ 17-րդ հոդվածը կարելի է, կամ պետք է կիրառել գործն ըստ էության քննելու փուլում, սակայն իրավաբանական գրականության մեջ, վերացարկվելով պրակտիկայով ձևավորված նախապատվությունից, նշվում է, որ 17-րդ հոդվածի կիրառությունը հնարավոր է ոչ միայն գործն ըստ էության քննելու, այլ նաև՝ դիմումի ընդունելության փուլում [18]:

Կոնվենցիոն իրավունքի պաշտպանության

տեսանկյունից, կարծում ենք, որ սկզբունքորեն արդարացված է նորմի կիրառությունը, գործն ըստ էության քննելու փուլում, քանզի ընդունելության փուլում ՄԻԵԴ-ի գործողությունները դրսևորվում են այսպես կոչված գիլյոտինի մեթոդի կիրառմամբ՝ անմիջապես դադարեցվում է գործի հետագա ուսումնասիրությունը, ինչը քննության լրիվության և բազմակողմանիության տեսանկյունից խնդրառու է: ՄԻԵԴ-ը իր նախադեպային պրակտիկայով հետևողականորեն պնդում է, որ գանգատի ընդունելության փուլում 17-րդ հոդվածն անհրաժեշտ է կիրառել բացառիկ դեպքերում [19]: Չնայած հնչող հետևողական քննադատությանը, ՄԻԵԴ-ը շարունակում է կիրառել 17-րդ հոդվածը նաև գանգատի ընդունելության փուլում:

Մասնավորապես, Հիգբ ուտ-Թահոյուն ալ իսլամին (իսլամական ազատագրական կուսակցություն) և այլք գործի շրջանակներում Դատարանը կիրառեց ՄԻԵԴ 17-րդ հոդվածը գանգատի ընդունելության փուլում՝ արձանագրելով, որ Հիգբ ուտ-Թահոյուն ալ իսլամին, որպես հիմնական դիմումատու, չի կարող օգտվել ՄԻԵԴ 11-րդ հոդվածի պաշտպանությունից, դիմումատուի և այլոց գործողություններն արգելքներ են ստեղծում միջազգային կոնֆլիկտների խաղաղ կարգավորման և մարդկային կյանքերի պաշտպանվածության տեսանկյունից: Նման իրավիճակում ՄԻԵԴ 11-րդ հոդվածի պաշտպանության առարկան ակնհայտ օգտագործվում է նպատակներին հակառակ, այլ կերպ՝ առերևույթ չարաշահվել էր նյութական իրավունքը [20]:

Հատկանշական է, որ բոլոր այն դեպքերում, երբ 17-րդ հոդվածը կիրառվել է գանգատի ընդունելության փուլում, դատարանը ընդգծել է, որ իրավունքի կրողի կողմից այն օգտագործվել է դրա նպատակին և էությանը հակառակ [21]: ՄԻԵԴ-ի պրակտիկան ցույց է տալիս, որ 17-րդ հոդվածը գանգատի ընդունելության փուլում հիմնականում կիրառվել է իսլամաֆոբիայի, հակասեմիթականության [22], ֆաշիզմի [23] գաղափարախոսության դեմ պայքարի գործերով՝ արդարացնելով պատասխանող պետության միջամտությունը ՄԻԵԴ-ով երաշխավորված իրավունքներին:

Այսպես, Նորվուդն ընդդեմ Մեծ Բրիտանիայի գործով (Norwood v. UK) դիմումատուն Բրիտանական ազգային կուսակցության անդամ էր, ով քրեական հետապնդման էր ենթարկվել հակաիսլամական բովանդակությամբ պատատ փակցնելու համար: Պատասխան պարունակում էր ամերիկյան երկփորյակ շենքերի նկարը՝ կրակի մեջ. «Փրկենք Մեծ Բրիտանիան և բրիտանացիներին իսլամից.....»

ձևակերպմամբ: Դատարանը մերժեց գանգատը *ratione materiae* հիմքով՝ ընդունման փուլում համարելով այն ՄԻԵԴ 10-րդ հոդվածով չպաշտպանվող՝ գնահատելով դիմումատուի գործողությունները ՄԻԵԴ 17-րդ հոդվածի կոնտեքստում: Դատարանը, հաստատելով բրիտանական ոստիկանության միջամտության իրավաչափությունը, պատասխանեց բնութագրեց Բրիտանիայում բնակվող մուսուլմաններին ուղղված վիրավորանք:

Վերլուծությունը թույլ է տալիս կատարել հետևություն այն մասին, որ ՄԻԵԴ 17-րդ հոդվածը կիրառվում է կոնվենցիոն որևէ իրավունքի ենթադրյալ խախտման վերաբերյալ բողոքների հետ կապված: ՄԻԵԴ 17-րդ հոդվածի կիրառությունը կամ մերժելն ապացույցն է այն բանի, որ առաջին դեպքում սուբյեկտիվ իրավունքի հասցեատիրոջ (հանրային իշխանության) միջամտությունն իրավաչափ է (իրավունքի կրողը չարաշահում է կոնվենցիոն իրավունքի պաշտպանության առարկան), իսկ երկրորդ դեպքում՝ սուբյեկտիվ իրավունքի կրողի կողմից, առնվազն կոնվենցիոն նորմով պաշտպանվելու հարցում, առկա է բարեխիղճ մոտեցում: Հատկանշական է, որ 17-րդ հոդվածի կիրառության վերաբերյալ պատասխանող կողմի (հանրային իշխանության) միջնորդության մերժումը որևէ կերպ չի նշանակում, որ հանրային իշխանությունների միջամտությունն իրավաչափ չի եղել: Այսպես՝ Վոնան ընդդեմ Հունգարիայի (Vona v. Hungary) գործի շրջանակներում [24] (գործի առարկան վերաբերում է ասոցիացիայի գործունեության դադարեցմանը, որի կազմում դիմումատուն հանդես էր եկել ցիգանների դեմ ելույթով) ՄԻԵԴ-ը հրաժարվեց կիրառել 17-րդ հոդվածը, սակայն Դատարանի վերջնական դիրքորոշումն այնպիսին էր, որ պետության միջամտությունն իրավաչափ էր և բացակայում էր ՄԻԵԴ 11-րդ հոդվածով երաշխավորված կոնվենցիոն իրավունքի ոչ իրավաչափ միջամտությունը: Այլ կերպ՝ ՄԻԵԴ-ը անդամ-պետության գործողություններն արդարացրեց ՄԻԵԴ 11-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով:

ՄԻԵԴ-ն նախադեպային իրավունքի համակարգային վերլուծության արդյունքում անհրաժեշտ ենք համարում նշել, որ անկախ 17-րդ հոդվածի նպատակներից, այն չի կարող հետապնդել այնպիսի իրավունքների սահմանափակման նպատակ, որը պայմանավորում է անձերի էությունը և իրավունքների պաշտպանության հնարավորությունը՝ ընդգծելով դրանց բացարձակ լինելու հանգամանքը [25]: Մասնավորապես Լոլեսն ընդդեմ Իռլանդիայի (Lawless v. Ireland) գործի շրջանակներում, Դատարանը հաստատված համարելով դի-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մումատուի արարքում ՄԻԵԿ 17-րդ հոդվածով նախատեսված նպատակներ հետապնդելու փաստը, այնուամենայնիվ, ընդգծեց, որ անձը չէր կարող պահվել անազատության մեջ առանց համապատասխան դատավարական ընթացակարգերի: Արդյունքում՝ արձանագրվեց անդամ պետության կողմից ՄԻԵԿ 5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածների խախտում [26]: ՄԻԵԿ-ի կողմից խնդրի հետ կապված

համարժեք գնահատականներ է տրվել նաև Roj TV A/S v. Denmark (§ 30) [27] և Šimunić v. Croatia (§ 37) [28] գործերի շրջանակներում՝ հաստատելով իր դիրքորոշումը՝ ՄԻԵԿ 5-րդ և 6-րդ հոդվածների վերաբերությամբ 17-րդ հոդվածը չկիրառելու հարցում:

Շարունակելի

¹ Ковлер А. И. Эволютивное толкование европейской конвенции по правам человека: возможности и пределы. Европейский Суд по правам человека как субъект толкования права. Журнал зарубежного законодательства и сравнительного правоведения N 3, 2016, С. 92-95.

² Де Сальвиа М. Европейская Конвенция по правам человека. Пер. с итал. СПб., 2004. С. 67.

³ Ковлер А. И. Նշված աշխատություն, С 94.

⁴ Де Сальвиа М. Прецеденты европейского суда по правам человека. Руководящие принципы судебной практики, относящейся к Европейской конвенции о защите прав человека и основных свобод. Судебная практика с 1960 по 2002 г. - СПб.: Издательство «Юридический центр Пресс», 2004. С. 1034. CommEDH, D 8348 и 8406/78, Glimmerveen et Hagenbeck, DR18, p. 187, spec.p. 205.

⁵ Lehideux and Isorni v. France § 53 (case no. 55/1997/839/1045, application no. 24662/94, Publication 1998-VII, no. 92) <https://clck.ru/GBEVt> (24.05.2019).

⁶ Dieudonné M'bala M'bala v. France (Application no. 25239/13), (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GYjcr>, 13.06.2019).

⁷ Case of Ždanoka v. Latvia (Application no. 58278/00) [GC], §§ 98-99 (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GYjpo>, 13.06.2019); Refah Partisi (the Welfare Party) and Others v. Turkey [GC], § 99; Kühnen v. Germany, Commission decision.

⁸ Hizb Ut-Tahrir and others v. Germany, (Application no. 31098/08), § 74, (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GYk9b>, 13.06.2019). Kasymakhunov and Saybatalov v. Russia, § 106);

⁹ Pavel Ivanov v. Russia (dec.); Norwood v. the United Kingdom (dec.); Belkacem v. Belgium (dec.);

¹⁰ Kasymakhunov and Saybatalov v. Russia, § 110);

¹¹ Case of Vona v. HUNGARY (Application no. 35943/10). (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GGRat>, 29.05.2019).

¹² Право Европейской конвенции по правам человека /Харрис, О'Бойл и Уорбрик; - Науч. Издание. - М.: Развитие правовых систем, 2016. С. 1133.

¹³ Gerd Pfeiffer und Hans-Georg Strickert, eds., KPD-Prozess. Dokumentarwerk zu dem Verfahren über den Antrag der Bundesregierung auf Feststellung der Verfassungswidrigkeit der Kommunistischen Partei Deutschlands vor dem Ersten Senat des Bundesverfassungsgerichts [KPD Trial. Documentation on the Proceedings regarding the Federal Government Petition to establish the Unconstitutionality of the Communist Party of Germany before the First Senate of the Federal Constitutional Court]. Karlsruhe, 1956, vol. 1, p. 2-3. Petition Submitted by the Federal Government to the Federal Constitutional Court Requesting a Ban on the Communist Party of Germany (KPD) (November 22, 1951).

¹⁴ Gerd Pfeiffer and Hans-Georg Strickert, eds., Outlawing the Communist Party, translated by Wolfgang P. von Schmertzling. Cambridge, MA, 1957, pp. 1-3.

¹⁵ Howard Davis, Political freedom. Associations, political purposes and the law. Continuum; 1 edition (March 15, 2001) p. 52.

¹⁶ Постановление Европейского Суда по делу “Лолесс против Ирландии” (Lawless v. Ireland) (существо жалобы) от 1 июля 1961 г., Series A, N 3, pp. 45 – 46, § 7, Постановление Европейского Суда по делу “Объединенная Коммунистическая партия Турции и другие против Турции” (United Communist Party of Turkey and Others v. Turkey) от 30 января 1998 г., Reports of Judgments and Decisions 1998-I, p. 27, § 60, см. также решение Комиссии по правам человека от 12 мая 1988 г. по жалобе N 12194/86, D.R. 56, p. 205, Решение Комиссии по правам человека от 11 января 1995 г. по жалобе N 21128/92, D.R. 80, p 94) (Հասանելի աղբյուրը՝ <https://zakoniros.ru/?p=19780>, 29.05.2019).

¹⁷ Право Европейской конвенции по правам человека /Харрис, О'Бойл и Уорбрик; - Науч. Издание. - М.: Развитие правовых систем, 2016. С. 1135.

¹⁸ Freedom of expression: Essays in honour of Nicolas Bratza, president of the European Court of Human Rights / [Josep Casadevall, Egbert Myjer, Michael O'Boyle, Anna Austin (eds.)]. Villiger in. Oisterwijk, The Netherlands: Wolf Legal Publishers, 2012, P 342-347.

¹⁹ Case of Paksas v. Lithuania, § 74,87. (Application no. 34932/04), (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/Gg6QB>, 29.05.2019).

- ²⁰ Hizb Ut-Tahrir and other v. Germany, HUDOC (2012) DA: (Application no. 31098/08), (Հասանելի արքյուրը՝ <https://clck.ru/GYk9b>, 29.05.2019).
- ²¹ Право Европейской конвенции по правам человека / Харрис, О'Бойл и Уорбрик; - Науч. Издание . - М.: Развитие правовых систем, 2016. С. 1135.
- ²² Pavel Ivanov v. Russia, N 35222/04, HUDOC (2007), W.P. and OTHERS v. Poland, N 42264/98, ECHR 2004-VII DA.
- ²³ Garaudy v. France, N 65831/01, ECHR 2003-IX DA, Schimanek v. Austria, N 32307/96 HUDOC (2007).
- ²⁴ Право Европейской конвенции по правам человека /Харрис, О'Бойл и Уорбрик; - Науч. Издание . - М.: Развитие правовых систем, 2016. С. 1136.
- ²⁵ Guide on Article 17 of the European Convention on Human Rights. Prohibition of abuse of rights. 1st edition - 31 March 2019, Council of Europe/European Court of Human Rights, 2019, P. 41.
- ²⁶ Case of Lawless v. Ireland (No. 3) (Application no 332/57), (Հասանելի արքյուրը՝ <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22%3A%5B%5C%22001-57518%22%5D%7D>), 29.05.2019).
- ²⁷ Roj TV A/S v. Denmark. Second section decision (Application no. 24683/14), (Հասանելի արքյուրը՝ <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22%3A%5B%5C%22001-183289%22%5D%7D>), 29.05.2019).
- ²⁸ Josip Šimunić v. Croatia. First section decision (Application no. 20373/17), (Հասանելի արքյուրը՝ <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22%3A%5B%5C%22001-189769%22%5D%7D>), 29.05.2019).

Օգտագործված գրականության ցանկ

1. Ковлер А. И. Эволютивное толкование европейской конвенции по правам человека: возможности и пределы. Европейский Суд по правам человека как субъект толкования права. Журнал зарубежного законодательства и сравнительного правоведения N 3, 2016.
2. Де Сальвиа М. Европейская Конвенция по правам человека. Пер. с итал. СПб., 2004.
3. Де Сальвиа М. Прецеденты европейского суда по правам человека. Руководящие принципы судебной практики, относящейся к Европейской конвенции о защите прав человека и основных свобод. Судебная практика с 1960 по 2002 г. - СПб.: Издательство «Юридический центр Пресс», 2004.
4. CommEDH, D 8348 и 8406/78, Glimmerveen et Hagenbeek, DR18.
5. Lehideux and Isorni v. France (case no. 55/1997/839/1045, application no. 24662/94, Publication 1998-VII, no. 92) <https://clck.ru/GBEVt> (24.05.2019).
6. Dieudonné M'bala M'bala v. France (Application no. 25239/13), (Հասանելի արքյուրը՝ <https://clck.ru/GYjcr>, 13.06.2019).
7. Case of Ždanoka v. Latvia (Application no. 58278/00) [GC], (Հասանելի արքյուրը՝ <https://clck.ru/GYjpo>, 13.06.2019).
8. Refah Partisi (the Welfare Party) and Others v. Turkey [GC], Kühnen v. Germany, Commission decision.
9. Hizb Ut-Tahrir and others v. Germany, (Application no. 31098/08), (Հասանելի արքյուրը՝ <https://clck.ru/GYk9b>, 13.06.2019). Kasymakhunov and Saybatalov v. Russia.
10. Pavel Ivanov v. Russia (dec.); Norwood v. the United Kingdom (dec.); Belkacem v. Belgium (dec.);
11. Kasymakhunov and Saybatalov v. Russia.
12. Case of Vona v. HUNGARY (Application no. 35943/10). (Հասանելի արքյուրը՝ <https://clck.ru/GGRat>, 29.05.2019).
13. Право Европейской конвенции по правам человека/Харрис, О'Бойл и Уорбрик; - Науч. Издание. - М.: Развитие правовых систем, 2016
14. Gerd Pfeiffer und Hans-Georg Strickert, eds., KPD-Prozess. Dokumentarwerk zu dem Verfahren über den Antrag der Bundesregierung auf Feststellung der Verfassungswidrigkeit der Kommunistischen Partei Deutschlands vor dem Ersten Senat des Bundesverfassungsgerichts [KPD Trial. Documentation on the Proceedings regarding the Federal Government Petition to establish the Unconstitutionality of the Communist Party of Germany before the First Senate of the Federal Constitutional Court]. Karlsruhe, 1956.
15. Petition Submitted by the Federal Government to the Federal Constitutional Court Requesting a Ban on the Communist Party of Germany (KPD) (November 22, 1951).
16. Gerd Pfeiffer and Hans-Georg Strickert, eds., Outlawing the Communist Party, translated by Wolfgang P. von Schmertzling. Cambridge, MA, 1957.
17. Howard Davis, Political freedom. Associations, political purposes and the law. Continuum; 1 edition (March 15, 2001)
18. Постановление Европейского Суда по делу “Лолесс против Ирландии” (Lawless v. Ireland) (существо жалобы) от 1 июля 1961 г., Series A, N 3.
19. Постановление Европейского Суда по делу “Объединенная Коммунистическая партия Турции и другие против Турции” (United Communist Party of Turkey and Others v. Turkey) от 30 января 1998 г.
20. Reports of Judgments and Decisions 1998-I.
21. Решение Комиссии по правам человека от 12 мая 1988 г. по жалобе N 12194/86, D.R. 56,
22. Решение Комиссии по правам человека от 11 января 1995 г. по жалобе N 21128/92, D.R. 80) (Հասանելի արքյուրը՝ <https://zakoniro.ru/?p=19780>, 29.05.2019).
23. Право Европейской конвенции по правам человека/Харрис, О'Бойл и Уорбрик; - Науч. Издание . - М.: Развитие правовых систем, 2016.
24. Freedom of expression: Essays in honour of Nicolas Bratza, president of the European Court of Human Rights /

- [Josep Casadevall, Egbert Myjer, Michael O'Boyle, Anna Austin (eds.)]. Villiger in. Oisterwijk, The Netherlands: Wolf Legal Publishers, 2012.
25. Case of Paksas v. Lithuania (Application no. 34932/04), (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/Gg6QB>, 29.05.2019).
26. Hizb Ut-Tahrir and other v. Germany, HUDOC (2012) DA: (Application no. 31098/08), (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GYk9b>, 29.05.2019).
27. Pavel Ivanov v. Russia, N 35222/04, HUDOC (2007), W.P. and OTHERS v. Poland, N 42264/98, ECHR 2004-VII DA.
28. Garaudy v. France, N 65831/01, ECHR 2003-IX DA, Schimanek v. Austria, N 32307/96 HUDOC (2007).
29. Guide on Article 17 of the European Convention on Human Rights. Prohibition of abuse of rights. 1st edition - 31 March 2019, Council of Europe/European Court of Human Rights, 2019.
30. Case of Lawless v. Ireland (No. 3) (Application no 332/57), (Հասանելի աղբյուրը՝ [https://hudoc.echr.coe.int/eng#{\"itemid\":\[\"001-57518\"\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{\), 29.05.2019).
31. Roj TV A/S v. Denmark. Second section decision (Application no. 24683/14), (Հասանելի աղբյուրը՝ [https://hudoc.echr.coe.int/eng#{\"itemid\":\[\"001-183289\"\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{\), 29.05. 2019).
32. Josip Šimunić v. Croatia. First section decision (Application no. 20373/17), (Հասանելի աղբյուրը՝ [https://hudoc.echr.coe.int/eng#{\"itemid\":\[\"001-189769\"\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{\), 29.05.2019).

Манук Мурадян

Начальник юридического управления полиции РА,
полковник полиции,
кандидат юридических наук, доцент

РЕЗЮМЕ

Вопросы злоупотребления субъективным правом в прецедентном праве Европейского суда

Проблема злоупотребления субъективным правом и борьба с ним является одной из наиболее актуальных и недостаточно изученных проблем современного права - как на национальном, так и на международном уровне. Предметом данной научной статьи является запрет на злоупотребление субъективным правом в Конвенции о защите прав человека и основных свобод и в прецедентном праве Европейского суда по правам человека.

Статья состоит из двух частей в которых соответственно рассматриваются вопросы запрета на злоупотребление конвенционных прав в соответствии со статьей 17 ЕКПЧ (часть 1) и запрета на злоупотребления индивидуальной жалобы в соответствии с подпунктом (а) пункта 3 статьи 35 ЕКПЧ (часть 2).

Ключевые слова: субъективное право, злоупотребление, ЕКПЧ, ЕСПЧ, прецедентное право.

Manuk Muradyan

Head of the Legal Department of Police of the RA, Colonel of Police,
PhD in Law, Associate Professor

SUMMARY

Issues of abuse of rights in the case-law of the European Court

The problem of abuse of rights and the fight against it is one of the most relevant and insufficiently studied problems of modern law both on national and international levels. The subject of this scientific article is the prohibition of abuse of rights in the Convention on the Protection of Human Rights and Fundamental Freedom and in the Case-law of the European Court of Human Rights.

The article consists of two parts, which respectively address the issues of the prohibition of abuse of conventional rights in accordance with Article 17 of the ECHR (part 1) and the prohibition of abuse of individual complaint in accordance with subparagraph (a) of paragraph 3 of Article 35 of the ECHR (part 2).

Key words: rights, abuse of rights, ECHR, Case-law.

Բնագիրը ներկայացվել է 02.09.2019թ.

Ընդունվել է տպագրության 06.09.2019թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է) իրավաբանական գիտությունների դոկտոր., պրոֆեսոր Ա. Ղազարյանը

ՎԱՋԵ ԹՈՐՈՍՅԱՆ

Եվրոպական համալսարանի իրավագիտության
ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ԱՇԽԱՐՀԻԿ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԵՎ ԴԱՎԱՆԱՆՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Աշխարհիկ պետությունը համաշխարհային պատմաիրավական մտքի զարգացման առավել քիչ ուսումնասիրված երևույթներից է: Թեև ժամանակի և տարածության մշտադի հետաքրքրությանը՝ կրոնի և իրավունքի, պետության և եկեղեցու, խղճի և դավանանքի ազատության հիմնահարցերը մեր օրերում հանդիպում են իրավակրոնական և պետակեղեցական հարաբերությունների նկատմամբ իրավաբանների դույզն-ինչ զգուշավոր և վերապահ մոտեցմանը: Անշուշտ, խիստ յուրօրինակ թեմայի ուսումնասիրմանը խոչընդոտում է նյութի խրթին լինելու հանգամանքը՝ կրոնի մեջ իրավունք և հակառակը փնտրելու, գտնելու և ընկալելու ցանկությունը: Այս հոդվածը մեր կատարած համապարփակ աշխատանքի շղթայի օղակներից մեկն է, որն էլ ներկայացվում է գիտական հանրության ուշադրությանը:

Հիմնաբառեր- աշխարհիկ պետություն, դավանանքի ազատություն, պետության և եկեղեցու հարաբերություններ:

Ավատատիրական հարաբերությունների ձևավորման շրջանում իրավաբաղաքական մտքի վրա ահռելի ազդեցություն ունեցավ քրիստոնեական կրոնը՝ դառնալով հասարակության գիտակցության առանցք: Երկարատև հետապնդումներից և զրկանքներից հետո քրիստոնյա գաղափարախոսները ոչ միայն ստացան ազատ գործելու և դավանելու հնարավորություն, այլև՝ արժանացան պետությունների հատուկ ուշադրությանը և հոգածությանը: Միլանի հրովարտակում ամրագրված հետևյալ տողերը ասվածի վառ վկայությունն են. *«Որևէ մեկին չի արգելվում ազատորեն ընտրել և դավանել քրիստոնեական հավատքը, յուրաքանչյուրին տրվում է ազատություն իր միտքը ուղղել այն հավատքին, որն, իր կարծիքով, համապատասխանում է իրեն ...»*: Անշուշտ, կուռ հավատքը լավագույն միջոց էր պետությունների գաղափարական միասնականության համար: Սակայն, կրոնական ազատության դրույթները նոր կրոնի առաջխաղացման հետ մեկտեղ հակադիր ընթացք ունեցան՝ ճնշելով այլակարծությունը:

Ավելորդ չէ հիշել Հուստինիանոս կայսեր Օրենսգիրքը, որտեղ բացառությամբ հրեաների՝ յուրաքանչյուրի համար սահմանված էր պարտադիր մկրտություն: Այն անձինք, ովքեր խախտում էին սույն օրենքը զրկվում էին գույքային իրավունքներից և ենթարկվում՝ քրեական պատասխանատվության: Ավելին՝ բազմաստվածություն դավանողներին և աստվածամարգներին սպառվում էին խստագույն պատիժներ, ընդհուպ մինչև մահապատիժ: Միաժամանակ, կրոնական և պետական

օրենքների միաձուլումը հանգեցրեց պետություն-եկեղեցի հարաբերությունների սերտաճմանը:

Ծագելով ստրկատիրական կացութաձևի ընդերքում՝ քրիստոնեությունը կրոնահավատամբային դիտանկյունից մշակեց «ազատություն» ֆենոմենի սեփական դոկտրինը՝ հարստացնելով մարդու իրավունքների վերաբերյալ իրավաբաղաքական միտքը: Բնական իրավունքը հանդես է գալիս որպես աստվածային իրավունք և ճանաչում մարդկային ազատ կամքը՝ որպես աստվածային սահմանվածության արդյունք: Քրիստոնեական ուսմունքի դիրքերից՝ խիղճը ասոցացվում է Աստծո հանդեպ ստանձնած պարտավորության հետ: Չենք երկմտի ասելու, որ քրիստոնեական սիրո և ազատության համամարդկային ընկալումները Կաթոլիկ եկեղեցու հիերարխիայի ձևավորմանը գուցահեռ այլ կերպ ու որակ ստացան, որի արդյունքում՝ անհաշտ պայքար ծավալվեց պապականության և աշխարհիկ ֆեոդալների միջև², և օրակարգային դարձավ պետություն-եկեղեցի իրավասությունների շրջանակը, ինչպես նաև այն հարցը, թե ո՞ր իշխանությունը պետք է ունենա գերակայություն՝ աշխարհիկ, թե՛ հոգևոր:

Հիմնախնդրի առնչությամբ ուշագրավ տեղեկություն պետք է համարել բյուզանդական կայսրին ուղղված Գելասիոս 1-ին պապի գրությունը (5-րդ դար), որտեղ հոգևոր առաջնորդը ընդգծում էր աշխարհիկ և հոգևոր իշխանությունների առկայությունը. «Սրանք միմյանցից անկախ են, բայց ունեն հակակշռող ներուժ: Կրոնական հարցերում կայսրերը պետք է ենթարկվեն եպիսկոպոսներին, իսկ

վերջիններս՝ ընդունեն կայսրերի գերակայությունը աշխարհիկ գործերում:»,- ասվում է գրության մեջ: Հատկանշական է, որ Պապը այդ ժամանակ ընդունում էր արիադավան կայսր Թեոդորիկ Մեծի գերագահությունը, որը երկրում հաստատել էր դավանանքի ազատություն և եկեղեցական գործերին պետական միջամտության անթույլատրելիություն: Հետագայում, Գելասիոս 1-ինի կողմից որդեգրված սկզբունքը խախտվեց և՛ հոգուտ եկեղեցու, և՛ թագավորական իշխանության: Եկեղեցու կողմից գործի դրվեց «երկու սրերի» գաղափարախոսությունը³, ըստ որի միապետի իշխանությունը բխում է Եկեղեցուց, որն էլ իր հեղինակությունը ստանում է Քրիստոսից, որից հետևում է, որ միապետը պետք է ենթարկվի եկեղեցուն⁴: Այդ դոկտրինի դիրքերից ամրագրվում է այն թեզը, որ գոյություն ունի հասարակության կառավարման երկու իշխանություն՝ աշխարհիկ և հոգևոր, որոնք ունեն իրենց առանձին գործունեության տիրույթը և չեն միջամտում միմյանց գործերին, քանի որ «աշխարհիկ սուրը», Աստծո միջոցով, եկեղեցին է շնորհել միապետին, հետևաբար՝ պապական իշխանությունը ավելի բարձր է աշխարհիկ իշխանությունից:

Աստծո միջոցով իշխանություն շնորհելու հիմնադրույթն իր հստակ արտացոլումն է գտել Նոր կտակարանում: Պողոս առաքյալի թղթում կարդում ենք. «Չկա իշխանություն, որ Աստծուց չլինի, բոլոր իշխանությունները Աստծուց են կարգված: Հետևաբար, ով հակառակում է իշխանությանը, Աստծո հրամանին է հակառակում ...» (Հռ. 13:12): Այս ելակետից էլ եկեղեցական հայրերը և քրիստոնյա գաղափարախոսները հիմնավորեցին իշխանության աստվածատուր հիմքերը և պետության հետ փոխհարաբերություններում եկեղեցու իշխանությունը համարեցին առաջնային:

Հիշյալ ուսմունքի հետևողական զարգացումը ցայտուն նկատում ենք եկեղեցու ականավոր գործիչ Հովհան Ոսկեբերանի աստվածաբանական ժառանգության մեջ, խոսելով աշխարհիկ և հոգևոր իշխանության հարաբերությունների մասին, նա ընդգծում է այն հանգամանքը, որ. «... հոգևորականության իշխանությունն ավելի մեծ է թագավորական իշխանությունից, և որքանով մեծ է, այդքանով թագավորին վստահված է մարմինը, իսկ հոգևորականին՝ հոգին: Մեկը սահմանում է դրամական պարտքերը, մյուսը՝ մեղքերի պարտքը, առաջինը գործում է հարկադրանքով, երկրորդը՝ հորդորանքով, առաջինը տիրում է զգայական գործիքներին, երկրորդը՝ հոգևոր, առաջինը պատերազմում է բարբարոսների դեմ, երկրորդը՝ դևերի:»⁵: Այսինքն, մեկնաբանելով միապետի աստվածային ծագման թե-

զը, նշանավոր հոգևորականը, փաստորեն, սահմանազատում էր աշխարհիկ և հոգևոր իշխանության ոլորտները: Այս առիթով իր հերթին Կոնստանդնուպոլսի պատրիարք Հովհան Զլատոուստը (Ոսկեբերան) գրում է. «Հաստատվում են երկու սահմաններ՝ մեկը թագավորության սահմանն է, մյուսը՝ սրբության: Վերջինս ավելի է առաջինից: Թագավորները գործում են երկրի վրա՝ մարմնի հանձնարարությամբ, իսկ սրբերը՝ երկնքում՝ հոգու հանձնարարությամբ: Սրբերի իշխանությունը բարձր է, հետևաբար՝ թագավորները զուլա պետք է խոնարհեն սրբերի ձեռքերի տակ:»:

Հարկ է նկատել, որ աշխարհիկ պետության վերաբերյալ մոտեցումներ քիչ չեն հանդիպում Քրիստոնեության Սուրբ գրքում՝ Աստվածաշնչում: Այսպես, Հին կտակարանում տեղ գտած Մովսեսի և նրա եղբայր Ահարոնի գործառույթների սահմանազատումը, որն իր ավարտին հասավ Մովսեսի կողմից դատական իշխանության հաստատման հետ մեկտեղ, այլ բան չէ, քան աշխարհիկ պետության աստվածաշնչյան ըմբռնումը: Ինչ վերաբերում է Նոր կտակարանին, աշխարհիկ և հոգևոր իշխանությունների առանձնացման յուրօրինակ արտահայտություն կարող է համարվել աստվածաշնչյան հայտնի միտքը՝ «Աստծունը տվեք Աստծուն, Կեսարինը՝ Կեսարին:» (Մատթ. 22:21):

Այնուհետև, շարունակելով խնդրի քննարկումը՝ «երկու սրերի» գաղափարական ուսմունքը, առավել համակարգված, տեսնում ենք Օգոստինոս Երանելու մոտ, որի աստվածաբանական, իրավափիլիսոփայական հայացքները մեծապես կանխորոշեցին միջին դարերի մտածողության ուղենիշները: Իր՝ «Աստծո քաղաքը» ('De Civitate Dei') նշանավոր աշխատության մեջ, առանձնացնելով մարդկային և աստվածային ոլորտները, Երանելին դրանք պայմանականորեն անվանում է քաղաքներ: Մարդկային քաղաքը նախատեսված է մարդու նյութական ցանկությունների բավարարման, իսկ աստվածայինը՝ երկնային խաղաղության և հոգու փրկության համար: Մարդկային քաղաքը նգովված է և ենթակա անխուսափելի կործանման, իսկ աստվածայինը՝ հավերժ է: «Պետությունը երկու քաղաքների միջև անհաշտ հակամարտություն է» այս մոտեցումից ելնելով՝ ամենևին էլ չի բխում, որ պետությունը և եկեղեցին չունեն համագործակցության եզրեր: Պետությունը կոչված է ապահովել ներքին խաղաղությունը և հավատացյալների անվտանգությունը, այն, միաժամանակ, բարոյական կախման մեջ է եկեղեցուց և պարտավոր է աջակցել այլադավանության դեմ պայքարին: Վերջինիս «Աստծո քաղաքը» աշխատության համատեքս-

տում պատեհ է հիշատակել Օգոստինոսի այն միտքը, ըստ որի. «...եթե անհավատները չեն համոզվում, հարկավոր է նրանց ստիպել, այլ ոչ թե սովորեցնել»¹: Այս դրույթը հետագայում գործնական իմաստ գտավ եկեղեցական ինկվիզիցիայի դաշտը և շրջանում:

Օգոստինոսի տեսությունը նորովի մեկնաբանեց և պետության ու եկեղեցու վերաբերյալ սեփական դոկտրինը կառուցեց **Թովմա Աբվինացին**: Նա փորձեց հարմարացնել Արիստոտելի իրավափիլիսոփայական գաղափարները Կաթոլիկ եկեղեցու կանոններին և առաջ քաշեց **քրիստոնեական պետության հայեցակարգը**: Ըստ այդմ՝ պետությունը և եկեղեցին, որպես Աստծո արարչագործության արդյունք, անբաժան են և փոխգործակցում են այլադավանության ճնշման հարցում²: Աշխարհիկ իշխանության իրավասության շրջանակը սահմանափակվում է մարդկանց մարմնական գործողությունների շրջանակում, իսկ մարդկային հոգուն վերաբերող հարցերը տնօրինում է եկեղեցին: Եվ, քանի որ, մարմինը ենթարկվում է հոգուն, հետևաբար, աշխարհիկ իշխանությունը պետք է ենթարկվի հոգևորին: Այս առումով, եկեղեցին կարող է միջամտել պետության գործունեությանը, նույնիսկ տալալել միապետին, եթե նա խախտի աստվածային օրենքները և անտեսի հանրային բարիքը³:

Բացի այդ, Աբվինացին առանձնացնում էր պետական իշխանության երեք տարր՝ էություն, ծագում և օգտագործում: Իշխանության էությունը Աստծո կողմից հաստատված կարգն է, որտեղ հարաբերությունները հիերարխիկ բնույթ են կրում: Բայց ամեն իշխանություն աստվածային է միայն իր էությանը, մինչդեռ ծագմամբ կամ կառավարման ձևով այն կարող է հակասել իր էությանը, ինչպես, օրինակ՝ բռնապետությունը: Այս իմաստով

Աբվինացին կառավարման լավագույն ձևը համարում էր միապետությունը:

Հավելենք նաև, որ Թովմա Աբվինացու իրավափիլիսոփայական գաղափարները չեն շրջանցել նաև օրենքների դասակարգման և քրիստոնեության դիտանկյունից դրանց գնահատման հարցերը: Օրենքների աստիճանակարգման մեջ տարբերակվում են՝

ա) հավերժական կամ աստվածային օրենքը, որը չունի նյութական արձանագրում,

բ) բնական օրենքը, որը աստվածային օրենքի արտացոլումն է մարդու գիտակցության մեջ,

գ) մարդկային դրական օրենքը, որը ամենից անկատար օրենքն է և ծառայում է մարդու երկրային ձգտումներին,

դ) աստվածային դրական օրենքը, որը ամրագրված է Աստվածաշնչում⁴:

Այսպիսով, ամփոփելով աշխատանքում առաջ քաշված դրույթները՝ կարող ենք ասել, որ քրիստոնեության ընդունման պահից սկսած նախկինում գերիշխող կրոնական գաղափարախոսությունը փոխարինվեց նորով՝ առանձին բացառություններով ճնշելով դավանանքի և, ընդհանրապես, խղճի ազատության դրսևորումները: Միաժամանակ, այս շրջանում պարբերաբար վերանայման ենթարկվեց պետություն և եկեղեցի հարաբերությունների ձևաչափը՝ երբեմն առաջնահերթությունը տալով եկեղեցական, իսկ որոշ դեպքերում թագավորական իշխանությանը: Այդուհանդերձ, այս հարցերի եռացող կաթսայում ի հայտ եկան աշխարհիկ և հոգևոր իշխանությունների սահմանների հստակեցման և անկախ գոյության պնդումներ, որոնք հետագայում արժեքավոր հենասյուն դարձան աշխարհիկ պետության հայեցակարգի կայացման համար:

¹ Евсевий Кесарийский, Церковная история / Ввод, ст., коммент., библиогр. список и указатели И. В. Кривушина. - Научное издание. - СПб.: «Издательство Олега Абышко», 2013., стр. 438.

² Կրոնաքաղաքական շարժումները մի կողմից ուղղված էին հոգևոր իշխանության ամրապնդմանը և այլակարծության զսպմանը, մյուս կողմից դրանք դավանաբանական քողարկմամբ աշխարհիկ իշխանության կողմից գործադրվող քայլեր էին եկեղեցու հոգևոր ինքնուրույնության դեմ: Այդպիսի երկպառակտություններով է հեղեղված ամբողջ միջնադարը: Տե՛ս, օրինակ, պավլիկյան և թոնդրակյան շարժումները Հայաստանում, «Պատկերամարտության» շարժումը Բյուզանդիայում, «Թյուդորյան աշխարհիկացումը կամ վանքերի բռնագրավումը» Անգլիայում, «Վիուկների որսը» Եվրոպայում և այլն:

³ «Երկու սրերի» աստվածաբանական ուսմունքի հիմնական դրույթները ձևավորվել են 10-12-րդ դարերում ինվեստիտուրայի համար պետության և եկեղեցու միջև ծավալվող պայքարում: Վարդապետության հիմքում ընկած է Հիսուս Քրիստոսի գրույցը առաքյալների հետ վերջին ընթրիքի ժամանակ, այն է՝ «35. Եւ նրանց ասաց. «Երբ

ուղարկեցի ձեզ առանց քսակի, մախադի եւ կօշիկների, մի՞թէ որեւէ բանի կարօտ մնացիք»: 36. Եւ նրանք ասացին՝ եւ ոչ մի բանի: Ապա ասաց. «Իսկ այժմ՝ ով որ քսակ ունի, թող վերցնի այն, նոյնպէս եւ՝ մախադ. իսկ ով որ չունի, թող վաճառի իր վերարկուն եւ իր համար սուր գնի: 37. Բայց ասում եմ ձեզ, այս եւս, որ գրուած է, պէտք է, որ կատարուի իմ վրայ, թէ՛ «Անօրէնների հետ դասուեց» «որովհետեւ, ինչ որ ինձ համար է գրուած, կատարուելու վրայ է»: 38. Եւ նրանք ասացին. «Տէ՛ր, ահաւասիկ այստեղ երկու սուր կայ»: Եւ նրանց ասաց. «Բաւական եմ»: Ավետարան ըստ Ղուկասի 22:24-50, աղբյուրը՝ <http://www.surbzoravor.am/reading/288>.

⁴ История политических и правовых учений: Учебник для вузов / Под общ. ред. акад. РАН, д. ю. н., проф. В. С. Нерсисянца, 4-е изд., перераб. и доп., М.: Норма, 2004, стр.118.

⁵ Ս. Հովհան Ոսկերեւան, Ճառերի ընտրանի, Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2015, էջեր 134-135:

⁶ Արշակյան Ա.Պ., Արշակյան Գ.Ա., Իրավական և քաղաքական մտքի պատմություն, ուս. ձեռնարկ, Երևան, «Նաիրի» հրատ. 2009թ. էջ 133:

⁷ Պապայան Ռ.Ա., Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները, գիտ. խմբ.՝ Գ.Գ. Հարությունյան, Էջմիածին, 2002թ., էջեր 380-381; Ռ.Գ. Պետրոսյան, Իրավունքի և օրենքի, դատարանի և արդարադատության աստվածաշնչյան հիմունքները,- Եր.: Ոսկան Երևանցի, 2008, էջ 30:

⁸ Елифанова Т.В., Человек, общество и государство в политическом учении Августина Блаженного. - М.: Международный юридический институт, 2012, стр.147.

⁹ Պետության և եկեղեցու անբաժանելիության սկզբունքի մասին Թովմա Աքվինացուց դեռ մեկ դար առաջ հիշատակել է անգլիացի փիլիսոփա, աստվածաբան Հովհան Սոլսբերիացին (John of Salisbury, 1115-1180թթ.): Նա, «Պոլիկրատիկոս» («Polycraticus») աշխատության մեջ հանգամանորեն քննարկելով աստվածապետության գաղափարները, ճանաչում է եկեղեցու գերակայությունը պետության նկատմամբ: Միապետը ընտրվում է Աստծո կողմից, ինչը անխուսափելիորեն պահանջում է եկեղեցու համաձայնության անհրաժեշտություն: Новая философская энциклопедия. В четырех томах. / Ин-т философии РАН. Научно-ред. совет: В.С. Степин, А.А. Гусейнов, Г.Ю. Семигин. М., Мысль, 2010, т. II, Е - М, стр.148.

¹⁰ Чичерин Б. Н., Политические мыслители древнего и нового мира.- М.: Гардарики, 2001, стр. 72-73.

¹¹ История политических и правовых учений: Учебник для вузов / Под общ. ред. акад. РАН, д. ю. н., проф. В. С. Нерсисянца, 4-е изд., перераб. и доп., М.: Норма, 2004, стр. 123-125.

Օգտագործված գրականության ցանկ

1. Արշակյան Ա. Պ., Արշակյան Գ. Ա., Իրավական և քաղաքական մտքի պատմություն, ուս. ձեռնարկ, Երևան, «Նաիրի» հրատ., 2009թ.:
2. Ս. Հովհան Ոսկերեւան, Ճառերի ընտրանի, Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2015, 224 էջ:
3. Պապայան Ռ. Ա., Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները, գիտ. խմբ.՝ Գ. Գ. Հարությունյան, Էջմիածին, 2002թ., 680 էջ:
4. Պետրոսյան Ռ. Գ., Իրավունքի և օրենքի, դատարանի և արդարադատության աստվածաշնչյան հիմունքները,- Եր.: Ոսկան Երևանցի, 2008թ.:
5. История политических и правовых учений: Учебник для вузов / Под общ. ред. акад. РАН, д. ю. н., проф. В. С. Нерсисянца, 4-е изд., перераб. и доп., М.: Норма, 2004.
6. Евсевий Кесарийский, Церковная история / Ввод, ст., коммент., библиогр. список и указатели И. В. Кривушина. - Научное издание. - СПб.: «Издательство Олега Абышко», 2013., 544 стр.
7. Елифанова Т. В., Человек, общество и государство в политическом учении Августина Блаженного. - М.: Международный юридический институт, 2012.
8. Новая философская энциклопедия. В четырех томах. / Ин-т философии РАН. Научно-ред. совет: В. С. Степин, А. А. Гусейнов, Г. Ю. Семигин. М., Мысль, 2010, т. II, Е – М.
9. Чичерин Б. Н., Политические мыслители древнего и нового мира.- М.: Гардарики, 2001.

Vahe Torosyan

Преподаватель юридического факультета Европейского университета,
кандидат юридических наук

РЕЗЮМЕ

Христианское восприятие светского государства и свобода вероисповедания

Светское государство является одним из менее изученных явлений развития мировой историко-правовой мысли. Несмотря на свою своевременность во времени и пространстве, проблемы свободы религии и права, государства и церкви, совести и вероисповедания в наши дни сталкиваются с осторожным и сдержанным подходом юристов к религиозно-правовым и церковно-государственным отношениям. Безусловно, изучению очень своеобразной темы препятствуют запутанность и замысловатость материала, желание искать, находить и воспринимать право в религии и наоборот. Эта статья является одним из звеньев цепочки выполненной нами всеобъемлющей работы, которая представлена вниманию научного сообщества.

Ключевые слова: светское государство, свобода вероисповедания, отношения государства и церкви.

Vahe Torosyan

Lecturer of the Chair of Law at the European University,
PhD in Law

SUMMARY

Christian perception of a secular state and freedom of religion

The secular state is one of the less studied phenomena of the development of world historical and legal thought. Despite their timeliness in time and space, the problems of the freedom of religion and the law, the state and the church, the conscience and the faith today are faced with a cautious and reserved approach of lawyers to religious-legal and church-state relations. Of course, the study of a very peculiar topic is hampered by the complexity and intricacy of the material, the desire to seek, find and perceive the right in religion and vice versa. This article is one of the links in the chain of comprehensive work that we have carried out and which is presented to the attention of the scientific community.

Key words: secular state, freedom of religion, state and church relations.

Բնագիրը ներկայացվել է 26.06.2019թ.

Ընդունվել է տպագրության 20.08.2019թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է) իրավաբանական գիտությունների թեկնածու Վ.Վ. Սարգսյանը

ՍՈՒՇԵՂ ԲԱԲԱՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ,
ոստիկանության գեներալ-մայոր

ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՅՄԱՆ ՊԱՏՄԱՏԵՍԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Մասնավոր կյանքի իրավունքի հետ կապված հարցերը առարկայական են եղել բոլոր ժամանակներում: Սույն գիտական հոդվածի շրջանակներում փորձ է կատարվել հստակեցնել խնդիրը նախապետական շրջանում: Այնուհետև ներկայացվել են հիմնահարցի զարգացման նախադրյալներն իրավական տարբեր համակարգերում և հայ իրավական մտքի շրջանակներում:

Հիմնաբառեր- մասնավոր կյանք, նախապետական շրջան, իրավական տարբեր համակարգեր, հայ իրավական միտք:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ձևավորման չափանիշները նախապետական շրջանում և հիմն աշխարհում: Եթե դիմենք մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի կայացման պատմաիրավական վերլուծությանը, իհարկե, կփաստենք, որ այն ներկայիս բովանդակությամբ գոյություն չի ունեցել նախնադարում և միջնադարում: Սակայն, նման իրավունքով պաշտպանվող անձի արժանապատվությունն ու անվտանգությունը եղել և մնում են մարդկային էությունը կանխորոշող հիմնարար արժեքներ, որոնք անհիշելի ժամանակներից կանխորոշել են ազատ մարդու (ազատ ցեղի, ժողովրդի լիիրավ անդամի) սոցիալական կարգավիճակը:

Համայնատիրական հասարակարգի ժամանակաշրջանում մարդը մասնավոր կյանքի կարիքը չի ունեցել, քանի որ նրա և համայնքի մյուս անդամների ընդհանուր և եզակի նպատակը գոյատևելն էր, ինչը հնարավոր էր միայն համայնքի կազմում: Մարդու գոյության համար անհրաժեշտ երևույթների հայտնագործումը (օրինակ՝ կրակը) անհատին հնարավորություն ընձեռեց ունենալ առանձին օջախ. ընտանիքն առանձնացավ հոտից, ինչն էլ պայմանավորեց անհատի լոկալ պաշտպանվածության, իրավունքների ընդլայնման անհրաժեշտությունը: Մարդը դարձավ անհատ և հնարավորություն ստացավ մեկուսանալ, պաշտպանվել օտար միջամտությունից:

Այս հիմնավորմամբ էլ գիտնականները մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ծագման նախադրյալների առաջացումը կապում են հոտից ընտանիքի առանձնացման հետ: Բնականաբար, մասնավոր կյանքն այդ շրջանում կառող էր գոյություն ունենալ միայն սովորութային

ձևաչափով՝ որպես միջանձնային փոխհարաբերությունների սկզբունք [1]:

Իմաստասերներից առաջինը, ով փորձեց տարանջատել «մասնավորը» և «հանրայինը», Արիստոտելն էր: Ըստ նրա՝ մասնավոր տիրույթի առաջին տարրերը ընտանիքն ու անձնական կյանքն էին [7]:

Ինչպես նշվեց, մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքով այսօր պաշտպանվող արժեքները՝ անձի արժանապատվությունն ու անվտանգությունը, հեղինակությունն ու պատիվը, իրավական պաշտպանության օբյեկտներ են դեռևս պատմության վաղ ժամանակներից, ուստի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պատմական վերլուծությունը պետք է սկսել հիմն ժամանակների իրավական աղբյուրներից՝ շեշտադրելով հենց այդ արժեքները պաշտպանելու միջոցով մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ճանաչման և գնահատման հանգամանքը:

Իրավունքի հիմն աղբյուրներում, օրինակ՝ Համաձուրաբի թագավորի օրենքներում, ամրագրված էին մարդուն զրպարտությունից պաշտպանող նորմեր: Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտման հնագույն ձևերից են ուրիշի խոսակցությանը «ականջ դնելը»՝ գաղտնալսելը, և ուրիշին գաղտնի հետևելը [8]:

Ուշագրավ են նաև Հռոմեական իրավունքի աղբյուրներում տեղ գտած ձևակերպումները քննարկվող ինստիտուտների վերաբերյալ: Մասնավորապես, դրանցում մահապատիժ էր սահմանվում երգերում այլ անձանց մասին վարկաբեկիչ տեղեկություններ ներառելու, այդպիսի երգեր կատարելու համար [22]:

Հիմնահարցի զարգացումն իրավական տարբեր համակարգերում: Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի կայացման հիմնահարցը վերլուծելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ 20-րդ դարը բեկումնային եղավ ինչպես Հայաստանի, այնպես էլ խորհրդային մյուս հանրապետությունների համար:

20-րդ դարում տեղի ունեցած իրավաքաղաքական գործընթացների արդյունքում Հայաստանը երկու անգամ փոխեց իր զարգացման ուղենիշերը: Դարասկզբի սոցիալիստական հեղափոխության արդյունք հանդիսացող միաբևեռ ամբողջատիրական (տոտալիտարիզմ) հասարակարգն իրավական գործընթացների զարգացումը մղեց երկրորդական պլան, իսկ անհատի իրավական պաշտպանվածության հարցերը մնացին, առնվազն, չլուծված: Իսկ դարավերջին մեկնարկած ժողովրդավարական նոր ալիքը (կապված խորհրդային կարգերի փլուզման հետ) արժեքները վերիմաստավորելու նոր հնարավորություն ընձեռեց նախկին միութենական հանրապետություններին: Այս դաշտից բացառություն չէր նաև ՀՀ-ն:

Պատմաքաղաքական գործընթացների զարգացումը բերեց այն համոզման, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանվածության վիճակը նախկին տոտալիտար արժեքների և իրավական պետության պահանջների միջև հարաբերակցության գնահատման չափորոշիչ է [1]:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պատմականորեն ձևավորման, զարգացման ընթացքը վերլուծելու և հասարակական հարաբերությունների կատարելագործման հետ այդ իրավունքի հատումներն ու զուգահեռներն ուսումնասիրելու համար, կարևոր է նկատի ունենալ, որ քննարկվող իրավունքն, առաջին հերթին, հնարավորություն է տալիս պահպանել անձնական ու ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկությունների գաղտնիությունը:

Հարկ է նկատել, որ մարդու այս իրավունքի գոյությունը չպետք է կապված լինի հասարակության զարգացման կոնկրետ էտապից և օրենսդրական նորմերից: Ցավոք, ոչ միշտ է նշված թեզը եղել մարդու իրավունքներով կաշկանդված հանրային իշխանության ուշադրության կենտրոնում: Մարդու իրավունքներն օժտված են սոցիալական բարձրագույն արժեքով՝ միաժամանակ լինելով հասարակության իրավաքաղաքական կառուցվածքի գնահատման կարևորագույն չափորոշիչը: Մարդու իրավունքների գերակայությունն իրավական պետության կարևորագույն սկզբունք է. հանգամանք,

որը պետք է գնահատել կորպորատիվ, խմբային և պետական շահերի հետ հարաբերակցության գնահատման տեսանկյունից [3]:

Ըստ գիտական հանրության որոշ ներկայացուցիչների (օրինակ՝ Պ.Վ.Անդիսինը և այլք)՝ իրավական պետության կայացումը կապել միայն պետական միջամտությունից մարդու իրավունքների պաշտպանության խնդրի հետ, նշանակում է էականորեն պարզունակ դիտարկել պետական և մասնավոր շահերի հարաբերակցության բարդ խնդիրը [5]:

Ռուս գիտնական Մ.Յու.Ավդենևն արդարացիորեն նշում է. «Յուրաքանչյուր հասարակության մեջ գոյություն ունեն արդարության, արժանապատվության և հարգանքի մասին կոնկրետ պատկերացումներ: Մարդու իրավունքների ինստիտուտը սոցիալական արդարության ապահովման միջոցներից մեկն է միայն:» [4]:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքն այն տեսքով, ինչպիսին ընկալվում է այսօր, տեսականորեն իմաստավորվել և օրենսդրորեն ամրապնդվել է 20-րդ դարում, այդ պատճառով գրականության մեջ սովորաբար շեշտվում է այդ իրավունքի ժամանակակից լինելու հանգամանքը [6]:

Քննարկվող իրավունքի հայրենիքն ընդունված է համարել Անգլիան և Հյուսիսային Ամերիկան: 1890թ. հրատարակվեց Սամուել Ուորենի և Լուիս Բրենդիսի «Հանգիստ թողնված լինելու իրավունքը» հոդվածը: Հեղինակները մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը համարում են մարդու հնագույն իրավունքներից մեկը՝ հիմքում ունենալով հին օրենքներում դրանց պաշտպանության անհրաժեշտության և մեխանիզմների առկայության դատողությունը: Վերացարկվելով նշանավոր տեսաբանների դատողություններից՝ այնուամենայնիվ, չի կարելի չհամաձայնել վերջիններիս տեսակետին՝ հաշվի առնելով նաև, որ հին հայկական իրավունքի աղբյուրներում ևս առկա են քննարկվող իրավունքի էության, պաշտպանության գործիքակազմի մասին հիշատակումներ:

Քննարկվող կառուցակարգի պատմական տեսանկյունից կայացման մեջ, կարծում ենք, ծանրակշիռ է նաև ֆրանսիական իրավական մտքի ներդրումը: Թեպետ 1804թ. Նապոլեոնի կողմից ստեղծված իրավունքին վերաբերող որոշակիացված լուծումներ չկային, սակայն, արդեն 19-րդ դարի կեսերից մեծ էր մասնավոր կյանքի և դրա պաշտպանության նկատմամբ հասարակության ուշադրությունը: Հատկաշահական է, որ 1858 թվականին ֆրանսիական դատարանը կոնկրետ գործի շրջանակներ-

րում որոշեց առանց ընտանիքի համաձայնության, արգելել հայտնի դերասանուհու դիմանկարի տեղադրումը մահվան գավթին: Փաստացի դատարանը դեմքի պատկերի և անվան ցուցադրման իրավունքը վերապահեց հարազատներին, առանց պատշաճ համաձայնությամբ դրանց տարածումն արգելելով՝ այդ իրավունքն առավ պաշտպանության տակ [23,24]:

Գերմանիայում մասնավոր կյանքի այս կամ այն ոլորտները վերցվեցին պաշտպանության տակ, ըստ էության, 20-րդ դարի սկզբից: Հիշատակման արժանի է 1910 թվականին գերմանական դատարանի դիրքորոշումը՝ կապված հայտնի ավիատոր Կ. Ջիպպելինի դիմանկարն ու անունը ծխախոտատուփի վրա գովազդային նպատակով օգտագործելու փորձի հետ՝ թույլ չտալով առանց համաձայնության դրանցից օգտվել: Եվ սա այն դեպքում, երբ ծխախոտագործ ընկերությունը մինչ այդ հովանավորել էր ավիագործին նրա նախագծերում [25]:

Հիմնահարցին առնչվող պատմական վերլուծությունների և ներկայիս դրական և դոկտրինալ ընկալումները թույլ են տալիս արձանագրել, որ հասարակական կյանքի տարբեր փուլերում զարգացում ապրած մասնավոր կյանքի անձեռնմխելիությունն անձի հետևյալ 4 իրավագործությունների միասնությունն է՝ (1) մասնավոր կյանքի ապօրինի միջամտություններից պաշտպանված լինելու հնարավորություն, (2) մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի անխոչընդոտ իրացման հնարավորություն, (3) մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը չխախտելու պահանջի իրավունք, (4) ոտնձգության դեպքում հանրային իշխանության պաշտպանությանն ապավինելու իրավունք:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության ինստիտուտը հայ իրավական մտքի շրջանակներում: Իրավունքի հայկական պատմական աղբյուրների մասին խոսելիս պետք է արձանագրել, որ այստեղ ևս հին ժամանակներից պաշտպանվել են մարդու հեղինակությունը, արժանապատվությունը, պատիվն ու անունը բազմապիսի կեղծ վկայություններից, զրպարտություններից, բամբասանքներից, չարախոսություններից: Այսպիսով, հայ իրավական միտքը ևս մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության հարցերը դիտարկել է պատվի, արժանապատվության և մարդու մասնավոր կյանքի տիրույթում գտնվող այլ արժեքների դեմ ոտնձգությունները բացառելու լույսի ներքո:

Այսպես՝ Հայաստանում կանոնական իրավունքի ամրապնդման նպատակով՝ կաթողիկոս

Ներսես Մեծի նախաձեռնությամբ 365թ. Տաքոն գավառի Աշտիշատ քաղաքում հրավիրվեց Հայ Առաքելական եկեղեցու առաջին ժողովը, որում հաստատվեցին հոգևոր և աշխարհիկ բովանդակությամբ մի քանի կանոններ և ընդունվեցին մի շարք որոշումներ՝ հայոց հոգևորականության ներքին կազմակերպվածության կարգ ու կանոնը և Հայոց եկեղեցու (պատմությանը հայտնի են որպես Աշտիշատի) կանոններ: Ժողովի կանոնները դատապարտում էին բազմակնությունը, դաշտանի շրջանում կնոջ հետ հարաբերությունը, հարբեցողությունը, շատակերությունը, անառակությունը, *կեղծ վկայությունը*, արվամոլությունը, անասնապղծությունը և այլ անբարոյական արարքներ [12]:

Հայ իրավական մտքի գանձարանի այս անգուցական աղբյուրը՝ Աշտիշատի կանոնները, վկայում է նաև բամբասանքի դատապարտելիության մասին: Մասնավորապես Աշտիշատի ժողովին վերագրվող կանոնների՝ «Քրիստոնեության հիմքերը խեղաթյուրող արատավոր երևույթների վերացման, քաղման ժամանակ հեթանոսական ծեսերի արգելքի և գրասրտության մասին» գլխում նշված է, որ ժողովը դատապարտեց սատկած կենդանու միսն ուտելը և արյունը խմելը, նենգությունը, ագահությունը, որկրամոլությունը, հափշտակությունը, արվամոլությունը, բամբասանքը, մոլի հարբեցողությունը, ստախոսությունը, պոռնկությունը, արյունահեղ սպանությունը և այլն [15]:

Զրպարտությունների պատժելիության մասին է վկայում Հայ իրավական մտքի գանձարանում իր ուրույն տեղը զբաղեցնող մեկ այլ՝ Աղվանից Արքա Վաչագանի՝ 21 գլխից բաղկացած Կանոնական Սահմանադրությունը, որն ընդունվել է 488 թվականին: Սահմանադրության՝ «Ընկերների և աշակերտների կողմից քահանային մեղադրելու կամ զրպարտելու մասին» գլխում նշվում է. «...եթե ... հանցանք են գործում, պետք է դատվեն կանոններով»: Սահմանադրության մյուս գլուխները ևս սահմանում են քրեական իրավունքի չափանիշները (կովող և արյուն թափող քրիստոնյայի, ապօրինի ամուսնությունների և ամուսնալուծությունների, հակակրոնական արարքների, **զրպարտությունների** և այլնի պատիժների մասին) [13]: Կանոնական Սահմանադրության կանոնների «Ընկերների և աշակերտների կողմից քահանային մեղադրելու կամ զրպարտելու մասին» գլխում նշված է՝ «Եթե մի որևէ քահանայի ընկերներն ու աշակերտները մեղք են բարդում այդ քահանայի վրա, իսկ իրենք անմեղ են, քահանան պետք է կանգնի սուրբ սեղանի, իսկ ամբաստանողները՝ ժողովրդի առաջ, ապա պետք է բեմից իջեցնեն և գյուղից արտաքսեն: Իսկ, եթե

նրա ընկերները և աշակերտները վրեժով լցված են, և ժողովուրդը գիտեր, որ նրանք առաջ խռով են եղել՝ քահանան պատարագ պետք է մատուցի, և ժողովուրդը անեծքով նրանց քշի: Իսկ, եթե խոստովանում են, որ սուտ են ասել, պետք է ապաշխարանք դնեն դրանց վրա և վանքից չհանեն. բայց, եթե դրանից հետո էլ հանցանք են գործում, պետք է դատվեն կանոններով:» [16]:

Ներսես Շնորհալու /Կալյեցի/ արձակ ստեղծագործությունների մեջ առանձնանում է 1166թ. գրված «Թուղթ ընդհանրականը»՝ 12-րդ դարի հայ հասարակական-իրավական մտքի պատմության հիանալի մի հուշարձան: «Թղթին» տալով կանոնական օրենքի նշանակություն՝ Ներսես Շնորհալին մասնավորապես կարգադրում է. «Թող ոչ ոք չբամբասի՝ ասածը ճիշտ լինի, թե սխալ, ուր մնաց՝ դատարկ տեղը: Քանզի ի՞նչ օգուտ կբերես եղբորդ՝ ուրիշների մոտ նրան բամբասելով. քե՛զ վնասեցիր, և նա էլ ոչնչով չօգտվեց:» [18]:

Ակնհայտ է, որ այս քայլերն ուղղված էին նաև մարդու մասնավոր կյանքի պաշտպանության ոլորտներն ուղղափոխելուն: Դիշտ է, դրանք մարդու համար սահմանված արգելքներ էին, սակայն եկեղեցու կողմից շարադրված կանոնների և փիլիսոփաների դոկտրինալ դիտարկումներում ընդգծվում էին մասնավոր կյանքի ոլորտները և դրանց միջամտության հնարավոր սահմանները:

Միջնադարյան Հայաստանի քաղաքական-իրավական միտքն իր ծաղկմանը հասավ օրենսդիր և իրավագետ, եկեղեցական և հասարակական-քաղաքական գործիչ Մխիթար Գոշի աշխատություններում: Մեր թվարկության 633 թվականին Գոշի ձեռնարկած «Դատաստանագիրք հայոց»-ի մեջ «(Իրենց) կանանց չարախոսողների մասին» հոդվածում նշված է. «Եթե մեկը կին առնի և ասի նրան, չարախոսի, թե կույս չի եղել, ճշտելով կնոջ խոստովանության և այլ կանանց հաստատումով սուտը՝ ամուսինը պատժվի գանահարությամբ և ըստ Օրենքի տուգանվի հարյուր սիկլ արծաթով՝ ըստ մերի [փողի] համարժեքի, և կինը նորից մնա (ամուսնու մոտ) և չարձակվի երբեք: Իսկ, եթե ճիշտ է իրողությունը, և աղջիկը կույս չի եղել, ըստ Օրենքի՝ մահվան է արժանի: Իսկ մեզ մոտ (այսպես) է. ամուսինն արձակի՝ եթե կամենա, կամ պահի՝ եթե իրեն հաճո է, և չհրապարակի (փաստը), քանի որ անարգությունը ամուսնու տանը չի կատարվել, որովհետև կույսերը շատ սայթաքումներ են թույլ տալիս: Եվ ամուսինը, եթե արձակի, իրավունք ունի կին առնելու, և կինը՝ ամուսին, որովհետև ամուսնության օրենքի տակ չշնացավ: Այս (գործի) դատաստանը մեզ մոտ բազմակողմանի (քննված) և

ճշգրտված է: Եթե (ամուսինը) իր իսկ չարախոսությունից (ելնելով) չի ուզում [կնոջը] վերցնել, դրա դատավճիռը տրված է այլ կանոններում:» [19]: Արժեքային իմաստով հիանալի այս կանոնը հստակ ընդգծում է մասնավոր կյանքի պաշտպանության տիրույթում ընտանեկան, ամուսնական կյանքի ներառելու հանգամանքը:

Ջննարկվող հիմնահարցի լույսի ներքո արժեքավոր են 13-րդ դարի ականավոր հասարակական-քաղաքական գործիչ, իրավագետ, օրենսդիր Սմբատ սպարապետ-գունդստարի 1265թ. կազմված դատաստանագրքի («Յաղագս դատաստանաց թագավորաց») առանձին կանոնները: Փաստաթղթի «Կնոջը բամբասող ամուսնու մասին» հոդվածում սահմանված է. «Եթե որևէ մեկն ասի իր կնոջը և ասի, թե ամուսնանալիս նա կույս չէր, և վկաներով հաստատվի, որ ստում է, պետք է կնոջը նվաստացնելու համար նրան լավ ծեծեն, իսկ նա կնոջ ազգականներին հարյուր դրամ տուգանք տա և կնոջը նորից հետ վերցնի: Բայց եթե ամուսինն իրավացի լինի, օրենքը պատվիրում է աղջկան սպանել: Բայց մենք՝ եկեղեցու հետևորդներս, ներողամտորեն բաժանվել ենք համարում հարմար, իսկ աղջկան թող դատեն իր ազգականները: Եթե դատավորը կարողանա գործը ծածուկ պահել և հաշտեցնել, դա ամուսնու կամքից է կախված, իսկ եթե նա չցանկանա՝ կարող է բաժանվել և այլ կնոջ հետ ամուսնանալ, իսկ կնոջ ազգականները կնոջ հետ կարող են վարվել ինչպես կամենան:» Կարգավորումը հստակ ընդգծում է ամուսնաընտանեկան կյանքին միջամտության սահմանները [20]:

Այսպիսով, պատմական իրադարձությունների և փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ թե համաշխարհային և թե հայ ժողովրդի պատմության քառուղիներում որոշակի կայացման ճանապարհ է անցել անհատի, անձի միայնակ, այլ՝ օտար աչքից մեկուսի մնալու իրավունքի զարգացումը:

Բացի սուտ վկայությունից, բամբասանքից, չարախոսությունից, զրպարտությունից պաշտպանված լինելուն ուղղված, որպես կանոն, միայն կրոնական գործիքակազմից, մարդու մասնավոր կյանքի մասին տեղեկությունները սկսեցին պաշտպանվել նաև հասարակական կյանքի մի շարք ոլորտներում, որտեղ մարդկային գործունեության արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ էր մասնավոր կյանքի տեղեկությունների օգտագործումը, օրինակ՝ բժշկական գաղտնիքի, խոստովանության և փաստաբանական, նոտարական գաղտնիքների տիրույթներում:

Բժշկությունը հավանաբար առաջին մասնա-

գիտությունն էր, որի կրողներն անընդհատ գործ էին ունենում անձնական և ընտանեկան գաղտնիքների հետ: Բժշկությամբ զբաղվողները պարտավոր էին չհրապարակել այդ գաղտնիքները: Այսպես՝ Հիպոկրատի հայտնի երդումը պարունակում է հետևյալ տողերը. «... բուժելու կամ չբուժելու ընթացքում ինչ էլ որ ես տեսնեմ կամ լսեմ այն ամենից, որը վերաբերում է մարդկային կյանքին, ես կպահեմ որպես գաղտնիք և չեմ հրապարակի:»:

Հետաքրքիր է «բուժելու կամ չբուժելու ընթացքում» ձևակերպումը, քանի որ բժիշկը կարող էր մարդկային կյանքի մասին տեղեկություններ ստանալ ոչ միայն բուժելու ընթացքում, այլև այդ նպատակով հիվանդի տուն կամ հանգրվանած վայր այցելելու ընթացքում [9]:

Որպես մասնավոր կյանքի անձեռնմխելության իրավունքի, մասնավոր կյանքի գաղտնիքի պաշտպանության երաշխիքներ՝ կարելի է վկայակոչել նաև խոստովանության գաղտնիքի պաշտպանությանն ուղղված կանոնները, որոնց հանդիպում ենք հայ իրավական մտքի տարբեր փաստաթղթերում: Այսպես՝ Գրիգոր Լուսավորչին (301-325թթ.) վերագրվող կանոնների «**խոստովանություն գաղտնիքի մասին**» գլխում սահմանված է. «Ծածուկ խոստովանությունը մեկին հայտնող քահանան թող աստիճանից գրկվի, պաշտոնյաների շարքից մերժվի և չխոստովանողների մեղքը ընկնի նրա վրա:»:

Նկատենք, որ նույն ձևակերպումն առկա է Հովհ. Մանդակունու և Բարսեղ Մեծի երրորդ խմբի կանոններում [14]:

Առավել համապարփակ կարգավորում է տալիս Դավիթ Ալավկա որդու (ծ.թ. անհայտ, Գ-անձակ, մահացել է 1129 կամ 1139 թ.) գրած կանոնագիրքը (կանոնական օրինադրություն), որը կոչվում է նաև դատաստանագիրք: Փաստաթուղթը ոչ միայն սահմանում է խոստովանության գաղտնիքի հրապարակման անթույլատրելիությունը, այլև իրավական մտքի զարգացման նոր աստիճանի է բարձրացնում կարգավորումը, երբ սահմանում է հանրային շահով պայմանավորված, այդ արգելքի բացառիկ դեպքերում խախտման պայմաններն ու հնարավորությունը, այսինքն՝ մասնավոր կյանքն անհիմն միջամտությունից պաշտպանելու իրավունքի սահմանափակման սահմանները: Այսպես՝ «**Մեղքի խոստովանությունը հրապարակող քահանաների մասին**» հոդվածում սահմանվում է. «Սուրբ գիրքը խոստովանահորն արգելում է մեղքերը հրապարակել: Եթե քահանան խոստովանողից պահանջի իր վարձքը, և նա չկարողանա, չկամենա կամ դադարեցնի տալ և անգամ, հակառակվելով, վնասի, և

խոստովանահայրը, քենից դրդված, հրապարակի խոստովանությունը, ապա նա Հեզի և Մարդասերի աշակերտը չէ, որ աղոթում էր իրեն խաչի հանողների համար: Ով մեկի խոստովանությունը հայտնի դարձնի՝ դատաստանի օրը պատասխան կտա նրա մեղքերի համար: Բայց, եթե խոստովանողի մեղքերը նրա փրկության համար ինքնուրույն կամ նրա ներկայությամբ հայտնի վարդապետներին՝ բարի է: Եթե խոստովանողը համառի և շարունակի գործել նույն մեղավոր գործերը, քահանան կարող է նրան խոստովանեցնել երկու-երեք քահանայի ներկայությամբ: Եթե սա էլ չազդի՝ խոստովանեցնել բազմության առաջ, եթե կրկին չազդի՝ պետք է հեթանոս համարվի, սակայն մեկ է՝ թույլ չի տրվում մեղքերը հրապարակել:» [17]:

Մեկ այլ մասնագիտական հանրույթ, որի անդամներն աշխատանքի բերումով առնչվում են այլոց մասնավոր կյանքի տեղեկություններին, փաստաբաններն են: Փաստաբանական գաղտնիքը ևս հնագույն իրավական ինստիտուտ է, որը կոչված է պաշտպանել վստահողների շահերը:

Հաճախորդների անձնական կյանքի մասին հայտնի դարձած տեղեկությունների պաշտպանության պարտականությունը կրող բժիշկներին և փաստաբաններին 13-րդ դարից սկսած միացան նաև քրիստոնեական խոստովանահայրերը: խոստովանության գաղտնիքի պաշտպանությունը թեպետ մինչ այդ տարբեր ձևակերպումներով հիշատակվել էր իրավունքի պատմական աղբյուրներում, սակայն, այդուհետ, միայն քահանաների համար դարձավ լիարժեք անժխտելի [6]:

Թե երբ սկսեց կայանալ նամակագրության գաղտնիքի իրավական ինստիտուտը, պարզ չէ: Համենայն դեպս, Հին Հռոմում արգելվում էր բացել մասնավոր նամակները, այդ թվում՝ դատական քննության շրջանակներում:

Իրավունքի հայկական աղբյուրներից այս առումով հիշարժան է Աստրախանի Հայոց դատաստանագիրքը: Ռուսական կայսրության Աստրախան քաղաքում, որը 17-18-րդ դարերի ռուսահայ ամենախոշոր գաղթօջախներից էր, 1747թ. գործել են հայերի կողմից ընտրված դատարաններ: Հայկական դատարանի հիմնումից հետո դրանում ալ գործունեության համար՝ աստրախանցի հայերից առաջին դատավորների՝ ժամանակի կրթված և հեղինակավոր մարդկանց կողմից մշակվեց Աստրախանի Հայոց դատաստանագիրքը: Փաստաթղթի՝ «**Ինչ-որ մեկի կնքած գրությունը բացողի մասին**» հոդվածում սահմանված էր. «Եթե մեկը համարձակվի բացել ուրիշի կնքած գրությունը և դրանով վնասել մեկնումեկին, իսկ նա, ում պատ-

կանում է գրությունը, բողոքի դատավորներին, պետք է գրություն բացողը վճարի ամբողջ վնասը և կատարած հանցանքի համար աքսորվի երեք տարով:» [21]:

Ինչպես տեսնում ենք, պատմական տարբեր փուլերում մասնավոր կյանքի մասին տեղեկությունների գաղտնիության, չհանրայնացման պաշտպանությունն ու ապահովումն իրականացվել է 2 խումբ գործիքակազմով: Բաժանումը տրված է տեղեկությունների՝ (1) նախապես իրավաչափ նպատակով հանրային գործառույթ իրականացնող անձին հայտնի դառնալու և (2) գաղտնիքի տիրոջ կողմից այն երբևէ բացահայտված չլինելու չափորոշիչով:

Պաշտպանության 1-ին խումբ գործիքակազմն ուղղված է եղել այն տեղեկությունների պաշտպանությանը, որոնք անձի կողմից կամովին չեն տրամադրվել հանրային գործառույթ իրականացնող գործիչներին: Դրանք են՝ նորմեր, որոնք ապահովել են սուտ մեղադրանքից, բամբասանքից, չարախոսությունից անձի պաշտպանությունը, ինչպես նաև նամակագրական գաղտնիությունը: 2-րդ խումբ միջոցներով պաշտպանվել են մասնավոր կյանքի այն տեղեկությունները, որոնք գաղտնիքի տերը կամովին հայտնել է հանրային գործառույթ իրականացնող գործչին և ակնկալել, որ գաղտնիքը կօգտագործվի միմիայն տվյալ գործառույթի նպատակներին հասնելու համար, չի հրապարակվի 3-րդ անձանց: Օրինակ՝ խոստովանահորն արված խոստովանության, բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիքների պաշտպանությունը:

Պետք է նկատի ունենալ, որ քննարկվող ժամանակահատվածի իրավունքի աղբյուրները թեպետ արձանագրում էին մարդու իրավունքներն ու ազատությունները, սակայն դրանց արդյունավետ պաշտպանության տեսանկյունից իրացման իրական մեխանիզմներն ու գործիքակազմը չէին նախատեսում, որից էականորեն տուժում էր մարդու իրավունքների պաշտպանվածության վիճակը:

Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ 20-րդ դարի 30-ականներից, մեր երկրում ևս տարածվեց սոցիալիստական հեղափոխության հետևանքով Ռուսաստանում ձևավորված արժեհամակարգը: Խորհրդային կառավարությունը եկել էր եզրահանգման, որ խորհրդային պետության մեջ չի կարող գոյություն ունենալ անհատական, մասնավոր շահեր պաշտպանող իրավունք, թույլատրելի են միայն կոլեկտիվ իրավունքները:

Այսպես, ԽՍՀՄ 1920թ. Սահմանադրությունը որևէ ուշադրություն չէր դարձնում քաղաքացիների անձնական իրավունքներին, քանի որ նախապատ-

վությունը տրվում էր սոցիալ-տնտեսական իրավունքներին: Բոլոր իրավունքները կրող համարվում էին միայն աշխատավորները: Ավելին՝ Սահմանադրության մեջ որևէ խոսք չկար մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի մասին [10]:

1936թ. ԽՍՀՄ Սահմանադրությունը թեպետ հռչակեց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, սակայն այն թերի էր և չէր ներառում քննարկվող իրավունքի պաշտպանության ամբողջական առարկան: Այսպես, քննարկվող հիմնական իրավունքի պաշտպանության առարկան ներառում էր միայն անձի, բնակարանի և նամակագրության գաղտնիքի անձեռնմխելիության իրավունքները: Թեպետ որոշ առումով Սահմանադրությունը հռչակեց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, սակայն խորհրդային մերժողական գաղափարախոսության պայմաններում այդպես էլ մնաց թղթի վրա: Դա բացատրվում էր այն թեզով, որ սոցիալիզմի օրոք անձի և հասարակության միջև տարբերություններն իսպառ բացակայում էին:

1977թ. ԽՍՀՄ Սահմանադրությունում առաջին անգամ ամրագրվեց անձնական կյանքի ինստիտուտը: Հատկանշական է, որ Սահմանադրության մեջ խոսվում էր անձնական կյանքի և ոչ թե մասնավոր կյանքի մասին: Այդ ժամանակահատվածի գիտնականներն անձնական կյանքը բնորոշում էին որպես քաղաքացու փոխհարաբերությունների համակցություն, որը պայմանավորված է անձնական շփումների, կախվածության, հմայքի, սիրո և ընկերության վրա [1]:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ խորհրդային, այդ թվում՝ ՀԽՍՀ, սահմանադրությունների թերությունն այն է, որ թեպետ դրանցում կարծես թե ճանաչվում էր քննարկվող իրավունքը, սակայն, գործնականում, պետությունը չէր իրացնում այդ իրավունքով կաշկանդվածության իր պարտականությունը՝ ինստիտուտ, որն օտար էր խորհրդային հասարակարգին:

¹ Майоров А.В. Поперина Е.Н. Формирование и развитие права на неприкосновенность частной жизни <https://clck.ru/HEKsU> (07.23.2019).

² История политических и правовых учений: учебник для вузов / под ред. В.С. Нерсисянца. М.: НОРМА, 2004. 944 с. <http://library.khpg.org/files/docs/1380635715.pdf> [с.59]

³ Ариков Г. Исторический анализ неприкосновенности частной жизни как института личной неприкосновенности, Молдавский государственный университет. <http://studiamsu.eu/wp-content/uploads/18.-p.124-130.pdf>

⁴ Авдеев М.Ю. Конституционно-правовые гарантии реализации права на неприкосновенность частной жизни. www.law-n-life.ru/arch/146/146-8.doc (25.01.2013).

⁵ Анохин П.В. Государственные интересы и права человека: соотношения и приоритеты / Автореф. дисс. ... канд. юрид. наук. Специальность 12.00.01 - Теория и история права и государства; История правовых учений. Санкт-Петербург: Санкт-Петербургский университет МВД России, 2001. <http://www.dslib.net/teoria-prava/gosudarstvennye-interesy-i-prava-cheloveka-sootnoshenie-i-prioritety.html> [с.3]

⁶ Афанасьева О.В. Право на неприкосновенность частной жизни. Укрепляет ли его закон о персональных данных. В: Общественные науки и современность, 2011, №6. <http://ecsocman.hse.ru/data/2014/01/16/1251305183/Afanasyeva.pdf> [с.76]

⁷ Теплых Л.В. Лексикон по теме “Продвижение права на неприкосновенность частной жизни в России”. <http://www.pgpalata.ru/reshr/privacy/lexicon.shtml> (13.03.2013).

⁸ Хрестоматия по всеобщей истории государства и права. Под ред. проф. З.М. Черниловского. Москва: Гардарики, 1996. [с.10]

⁹ Клятва Гиппократ. <http://www.gippokrat.uz/klyatva-gippokrata/klyatva-na-russkom> (28.02.2013).

¹⁰ Ռուբեն Ավագյան. «Գրիգոր Չոքրասի և Գրիգոր Չոքրարյանի իրավական միտքը», Երևան, «Մանգ», 2003

¹¹ Ռուբեն Ավագյան «Հայ իրավական մտքի զանգվածային (մ.թ.ա. 9-րդ դարից մինչև մ.թ. 19-րդ դար)», Գիրք 1-ին, Երևան, «ՄՆԻԻ ԵՄ-21-րդ դար», 2001, էջ 43:

¹² Ռուբեն Ավագյան, նշված աշխատությունը, էջ 63:

¹³ Ռուբեն Ավագյան, նշված աշխատությունը, էջ 71:

¹⁴ Ռուբեն Ավագյան, նշված աշխատությունը, էջ 97:

¹⁵ Ռուբեն Ավագյան, նշված աշխատությունը, էջ 107:

¹⁶ Ռուբեն Ավագյան, նշված աշխատությունը, էջ 140:

¹⁷ Ռուբեն Ավագյան, նշված աշխատությունը, էջ 224:

¹⁸ Ռուբեն Ավագյան, նշված աշխատությունը, էջ 293:

¹⁹ Ռուբեն Ավագյան, նշված աշխատությունը, էջ 412-413:

²⁰ Ռուբեն Ավագյան, նշված աշխատությունը, էջ 609:

²¹ Ռուբեն Ավագյան «Հայ իրավական մտքի զանգվածային (մ.թ.ա. 9-րդ դարից մինչև մ.թ. 19-րդ դար)», Գիրք 2-րդ, Երևան, «ՄՆԻԻ ԵՄ-21-րդ դար», 2002, էջ 328:

²² Головистикова А.Н., Грудцына Л.Ю. Конституционное право России: Учебник.-М.: Эксмо, 2006. 864 с

²³ Французский гражданский кодекс: учебн.-практич. комментарий. М.: Проспект, 2008.

²⁴ Beverly-Smoth H., Ohly A., Lucas-Schloetter A. Privacy, Propriety and Personality. Civil Law Perspectives on Commercial Appropriation. Cambridge University Press, 2005. P. 147-148.

²⁵ Гражданское уложение Германии. Вводный закон к Гражданскому уложению. Пер. с нем. / Науч. ред. А.Л. Маковский и др. М.: Волтерс Клувер, 2004; Alfred Kommentar zu dem Geetze Betreffend das Urheberrecht an Werken der bildenden Kunst und der Photographie, 1908. S. 15.

Օգտագործված գրականության ցանկ

1. Ռուբեն Ավագյան «Գրիգոր Չոքրասի և Գրիգոր Չոքրարյանի իրավական միտքը», Երևան, «Մանգ», 2003:

2. Ռուբեն Ավագյան «Հայ իրավական մտքի զանգվածային (մ.թ.ա. 9-րդ դարից մինչև մ.թ. 19-րդ դար)», Գիրք 1-ին, Երևան, «ՄՆԻԻ ԵՄ-21-րդ դար», 2001:

3. Ռուբեն Ավագյան «Հայ իրավական մտքի զանգվածային (մ.թ.ա. 9-րդ դարից մինչև մ.թ. 19-րդ դար)», Գիրք 2-րդ, Երևան, «ՄՆԻԻ ԵՄ-21-րդ դար», 2002:

4. Майоров А.В. Поперина Е.Н. Формирование и развитие права на неприкосновенность частной жизни <https://clck.ru/HEKsU> (07.23.2019).

5. История политических и правовых учений: учебник для вузов / под ред. В.С. Нерсисянца. М.: НОРМА, 2004.

6. Ариков Г. Исторический анализ неприкосновенности частной жизни как института личной неприкосновенности, Молдавский государственный университет.

7. Авдеев М.Ю. Конституционно-правовые гарантии реализации права на неприкосновенность частной жизни. www.law-n-life.ru/arch/146/146-8.doc (25.01.2013).

8. Анохин П.В. Государственные интересы и права человека: соотношения и приоритеты / Автореф. дисс. ... канд. юрид. наук. Специальность 12.00.01 - Теория и история права и государства; История правовых учений. Санкт-Петербург: Санкт-Петербургский университет МВД России, 2001.

9. Афанасьева О.В. Право на неприкосновенность частной жизни. Укрепляет ли его закон о персональных данных. В: Общественные науки и современность, 2011, №6.
10. Теплых Л.В. Лексикон по теме “Продвижение права на неприкосновенность частной жизни в России”. <http://www.pgpalata.ru/reshr/privacy/lexicon.shtml> (13.03.2013).
11. Хрестоматия по всеобщей истории государства и права. Под ред. проф. З.М. Черниловского. Москва: Гардарики, 1996.
12. Клятва Гиппократ. <http://www.gippokrat.uz/klyatva-gippokrata/klyatva-na-russkom> (28.02.2013).
13. Головистикова А.Н., Грудцына Л.Ю. Конституционное право России: Учебник.-М.: Эксмо, 2006.
14. Французский гражданский кодекс: учебн.-практич. комментарий. М.: Проспект, 2008.
15. Beverly-Smoth H., Ohly A., Lucas-Schloetter A. Privacy, Propriety and Personality. Civil Law Perspectives on Commercial Appropriation. Cambridge University Press, 2005. P. 147-148.
16. Гражданское уложение Германии. Вводный закон к Гражданскому уложению. Пер. с нем. / Науч. ред. А.Л. Маковский и др. М.: Волтерс Клувер, 2004; Alfred Kommentar zu dem Geetze Betreffend das Urheberrecht an Werken der bildenden Künste und der Photographie, 1908. S. 15.

Мупег Бабаян

Начальник Образовательного комплекса полиции РА,
генерал-майор полиции

РЕЗЮМЕ

Исторические особенности формирования и развития права на частную жизнь

Вопросы, связанные с правом на частную жизнь, всегда были существенными. В статье была предпринята попытка прояснить существование проблематики в догосударственный период. Затем были представлены предпосылки для развития проблемы в различных правовых системах и в рамках армянской правовой мысли.

Ключевые слова: частная жизнь, догосударственный период, различные правовые системы, армянская правовая мысль.

Mushegh Babayan

Head of the Police Educational Complex of RA,
Police Major General

SUMMARY

Historical features of the formation and development of the right to private life

Issues related to the right to Private Life have always been significant. In the article an attempt has been done to clarify the existence of issues in the pre-state period. Then prerequisites for the development of the problem in various legal systems and within the framework of Armenian legal thought were presented.

Key words: right to Private Life, pre-state period, various legal systems, Armenian legal thought.

Բնագիրը ներկայացվել է 23.07.2019թ.

Ընդունվել է տպագրության 20.08.2019թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է) իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ. Մուրադյանը

ՍԻՐԱՆՈՒՇ ՄԵԼԻՔՅԱՆ

ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և
գործընթացների ամբիոնի դասախոս,
ասպիրանտ

ԵԿԵՂԵՑԻ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Սույն հոդվածում ներկայացված է եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների իրավական կարգավորման հիմնահարցը Հայաստանի Հանրապետությունում: Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների իրավական կարգավորման հիմնահարցն այն կարևորագույն ուսումնասիրության առարկան է, որը մեծ նշանակություն ունի պետակեղեցական հարաբերությունները հայաստանյան մոդելի ու գործընթացների ուսումնասիրության համար:

Հիմնարար- եկեղեցի, պետություն, սահմանադրություն, օրենք, կրոնական կազմակերպություն, ձևաչափ, իրավական կարգավորում:

Ցանկացած երկրում, պետակեղեցական հարաբերությունների մոդելն ու արդի իրողությունները հասկանալու համար՝ պատմական նախադրյալներից, սոցիալ-տնտեսական վիճակից, առողջապահական, կրթական գործընթացներից, պետական, սոցիալական, կրոնական ինստիտուտների գործունեության կարգավորման մեխանիզմներից զատ, առանձնակի ուշադրության է արժանի եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների կարգավորման իրավական հիմնահարցը: Հայաստանի Հանրապետությունում, թեև գոյություն ունի եկեղեցի-պետություն փոխհարաբերության կարգավորման իրավական հստակ ձևաչափ¹, այնուամենայնիվ, մի շարք իրողություններ ու գործընթացներ հավաստում են, որ Հայաստանի Հանրապետությունը եկեղեցի-պետություն փոխհարաբերության տարբեր մոդելներից որդեգրել է որոշակի հատկանիշներ ու գտնվում է դեռևս փոխակերպման, ձևավորման, ընթացակարգային փուլերում:

Անկախությունից ի վեր, եկեղեցին ընդլայնել և ծավալում կերպով իրականացրել է իր գործունեությունը թե՛ պետական, թե՛ հանրային կյանքում: Նշենք, որ Հայաստանի Հանրապետության և Հայ Առաքելական Եկեղեցու (այսուհետ նաև Հայ եկեղեցի) հարաբերություններն ինչ-որ մոդելի մեջ տեղավորելուց առաջ, անհրաժեշտ է հաշվի առնել սահմանադրական բարեփոխումների ընթացքը՝ երկու ինստիտուտների միջև փոխհարաբերությունները հասկանալու համար: Ի տարբերություն 1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված Սահմա-

նադրության, որտեղ նշվում էր, որ եկեղեցին անջատ է պետությունից, 2015 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված Սահմանադրության մեջ այդ ձևակերպմանը փոխարինելու եկավ՝ «Կրոնական կազմակերպություններն անջատ են պետությունից» եզրույթը: Կապված այս և մի շարք իրավական փոփոխությունների հետ՝ դժվար է հստակ նշել, թե Հայաստանի Հանրապետությունում որ մոդելին են ենթարկվում եկեղեցին ու պետությունը:

Եկեղեցի-պետություն փոխհարաբերության իրողությունը հասկանալու համար, նախևառաջ անդրադառնանք Հայ Առաքելական Եկեղեցու և Հայաստանի Հանրապետության փոխհարաբերության իրավական կարգավորման հիմնահարցերին, այն օրենսդրական բազային, որ գոյություն ունի երկու ինստիտուտների միջև: Նախ նշենք Հայաստանի Հանրապետության և Հայ Առաքելական Եկեղեցու փոխհարաբերություններին առնչվող օրենքի, իրավունքի հիմնական աղբյուրները, իրենց համապատասխան փոփոխություններով և լրացումներով, դրանք են՝ ՀՀ Սահմանադրությունը, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև մտադրությունների հուշագիրը, Հայ Առաքելական Եկեղեցու և ՀՀ կառավարության միջև կնքված տարաբնույթ համաձայնագրերը,

իրավական ակտերը և այլ փաստաթղթեր՝ ՀՀ զինված ուժերում հոգևոր ծառայության իրականացման մասին համաձայնագիրը, Հանրակրթական դպրոցներում «Հայ եկեղեցու պատմություն» առարկայի վերաբերյալ համաձայնագիրը և այլն:

Հայաստանի Հանրապետությունում եկեղեցիպետություն փոխհարաբերությունների իրավական կարգավորումը կարևոր ենք համարում ներկայացնել ժամանակագրական տեսանկյունից՝ երկու ինստիտուտների փոխհարաբերությունների տրանսֆորմացիան ավելի լավ պատկերացնելու համար: Այդ տեսանկյունից եկեղեցու համար կարևոր նշանակություն ունեցավ 1991 թվականի հունիսին ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունված «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք): Այս Օրենքը Հայ Առաքելական Եկեղեցուն հնարավորություն տվեց վերակառուցել իր թեմերն ու եկեղեցական համայնքները: Այս փաստաթուղթը սույն ոլորտը կարգավորող առաջին իրավական հիմքն էր, որով Հայ Առաքելական Եկեղեցին հռչակվեց որպես «ազգային եկեղեցի», որը մեծ դեր ունի հոգևոր կյանքի շինության և ազգապահպանման գործում²:

Հայաստանի Հանրապետության կողմից այս Օրենքի ընդունումը, որը նաև ամրագրված է միջազգային իրավունքի մի շարք կարևորագույն աղբյուրներում³, լուրջ քայլ էր ժողովրդավարական արժեքների հաստատման ու ժողովրդավար պետության կերտման ճանապարհին: Արդեն իսկ Օրենքի նախաբանում, Հայ Առաքելական Եկեղեցին ճանաչվում է՝ որպես «հայ ժողովրդի ազգային եկեղեցի, նրա հոգևոր կյանքի շինության և ազգապահպանության կարևոր պատվար»⁴: Սույն Օրենքը ճանաչում է կրոնական կազմակերպությունների ազատ գործելու իրավունքը՝ նրանց գործունեության, ստեղծման իրավական մեխանիզմները, իրավունքները, պետական գրանցումը: Սույն Օրենքը Հայ Առաքելական Եկեղեցուն «ազգային եկեղեցի» բնորոշումն է վերագրում, որը թվում է՝ չեզոք է, սակայն նրան վերապահում են մի շարք բացառիկ իրավունքներ: Օրենքի 4-րդ հոդվածում նշվում է. «Կրոնական կազմակերպությունը հավատի համատեղ դավանության, ինչպես նաև կրոնական այլ պահանջումների բավարարման նպատակով ստեղծված քաղաքացիների միավորում է»: Կրոնական կազմակերպություններ են՝ եկեղեցական ու կրոնական համայնքները, թեմերը, վանքերը, կրոնական միաբանությունները, նրանց կրթական ու հրատարակչական հաստատությունները և այլ կրոնական-եկեղեցական հիմնարկներ: Նշված

օրենքի համաձայն՝ ստացվում է, որ Հայ եկեղեցին ևս կրոնական կազմակերպություն է, սակայն, միևնույն ժամանակ, հատուկ կարգավիճակով: Որպես օրինակ կարող ենք ընդգծել Օրենքի 17-րդ հոդվածը, որտեղ շեշտվում է, որ պետությունը չի խոչընդոտում ազգային եկեղեցու մենաշնորհի հանդիսացող հետևյալ առաքելությունների իրագործմանը.

- ազատ քարոզել ու տարածել իր դավանանքը Հայաստանի Հանրապետության ողջ տարածքով,
- վերստեղծել իր պատմական ավանդույթները, կառուցվածքը, կազմակերպությունները, թեմերն ու համայնքները,
- կառուցել նոր եկեղեցիներ, գործող դարձնել իրեն պատկանող պատմական հուշարձան-եկեղեցիները՝ ինչպես հավատացյալների խնդրանքով, այնպես էլ՝ սեփական նախաձեռնությամբ,
- նպաստել հայ ժողովրդի հոգևոր կրթությանը, օրենքով սահմանված կարգով նաև պետական կրթական հաստատություններում,
- գործնականորեն աջակցել հայ ժողովրդի բարոյական կատարելագործմանը,
- ծավալել բարեգործական և բարեխնամ գործունեություն:

Միևնույն ժամանակ, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին որպես ազգային եկեղեցի, որը գործում է նաև հանրապետության տարածքից դուրս, ենթակա է Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը՝ միջազգային իրավական նորմերի սահմաններում⁶:

Ժամանակագրական առումով հաջորդ կարևորագույն փաստաթուղթը՝ ՀՀ Սահմանադրությունն էր, որն ընդունվեց համազգային քվեարկությամբ 1995 թվականի հուլիսի 5-ին և հետագայում երկու անգամ փոփոխությունների ենթարկվեց: Ի տարբերություն 1995 թվականին ընդունված Սահմանադրության՝ 2005 թվականի համապատասխանաբար լրամշակված տարբերակի մեջ 8.1-րդ հոդվածը վերաբերում է պետաեկեղեցական հարաբերություններին: Այնտեղ նշված է. «Հայաստանի Հանրապետությունում եկեղեցին անջատ է պետությունից: Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում: Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով գործող բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը: Հայաստանի Հանրապետության և Հայաստան-

յայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով:»։ Ի տարբերություն 2005 թվականի փոփոխված տարբերակի, որտեղ նշվում է, որ եկեղեցին անջատ է պետությունից՝ 2015 թվականի լրամշակված ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածում նշված է.

«1. Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:

2. Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով:»:

Որպես այդպիսին Սահմանադրական բարեփոխումներում նույնն է մնացել Հայ Առաքելական Եկեղեցու դերի և կարևորության ընդգծումը հայ ժողովրդի կյանքում այնպիսի փոխլրացնող հասկացություններով, ինչպիսիք են՝ ազգային մշակույթի և ազգային ինքնության պահպանումը: Կարող ենք նաև փաստել, որ այդ եզրույթը որոշակի իրավական հետևանքներ չի նախատեսում և ավելի շատ կրում է հռչակագրային բնույթ: Այնուհետև, ի տարբերություն 2005 թվականին ընդունված Սահմանադրության, 2015 թվականին ընդունված Սահմանադրությունը չի հռչակում եկեղեցու և պետության անջատ լինելու գաղափարը: Այսպես, ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածում ասվում է, որ երաշխավորվում է կրոնական կազմակերպությունների ազատությունը, ինչպես նաև նշվում է, որ կրոնական կազմակերպություններն անջատ են պետությունից: Ի տարբերություն 2005 թվականին ընդունված Սահմանադրության, որտեղ նշված էր, որ Հայաստանի Հանրապետությունում եկեղեցին անջատ է պետությունից, 2015 թվականի ընդունված Սահմանադրության մեջ այդ ձևակերպումը փոխարինված է հետևյալով. «Կրոնական կազմակերպություններն անջատ են պետությունից»: ՀՀ Սահմանադրության 17-րդ և 18-րդ հոդվածներում Կրոնական կազմակերպություններին և Հայ եկեղեցուն, փաստորեն, տրվում են առանձին իրավական կարգավիճակներ և դրանք ներկայացվում են որպես առանձին իրավական կատեգորիաներ: Այսինքն, Հայ եկեղեցու իրավական կարգավիճակը կրոնական կազմակերպությունների իրավական կարգավիճակից օրենսդրորեն տարանջատվում, տարբերակվում է:

Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև իրավահարաբերությունների կարգավորման, եր-

կու կողմերի իրավական դաշտի կարգավորման համար անհրաժեշտ նախագծերի նախապատրաստման համար ստորագրվեց մի հուշագիր, որն իրավական հիմք էր հանդիսանալու հետագա ստորագրվելիք մի շարք փաստաթղթերի համար: Այդ կարևորագույն հուշագիրը, որը ստորագրվել է Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև՝ Ստադրությունների հուշագիրն է՝ ստորագրված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, 2000 թվականի մարտի 17-ին՝ այդ շրջանի ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական, ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Շ. Կարամանուկյանի, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի, ՀՀ վարչապետի խորհրդական կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհրդի նախագահի պաշտոնակատար Լ. Մկրտչյանի, Երևանի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի ղեկան Գերաշնորհ Տեր Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի ստորագրությամբ:

Հատկանշական է հատկապես այդ հուշագրի առաջին կետը, որը բաղկացած է 7 ենթահարցից և իր մեջ ներառում է հարաբերությունների երկուստեք կարգավորման մի շարք խնդիրների հստակեցում ու հետագա ընթացքի կարգավորում.

ա) Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փոխհարաբերությունները կարգավորող օրենսդրության հետագա կատարելագործում և զարգացում: Այս ուղղությամբ հետագայում ստորագրվեցին մի շարք փաստաթղթեր, որոնք հիմք հանդիսացան հետագա մի շարք հարաբերությունների իրավական կարգավորման համար,

բ) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու իբրև իրավաբանական անձի սեփականության (հող, անշարժ և շարժական գույք, պատմամշակութային հուշարձաններ և այլն) հետ կապված հիմնահարցերի հստակեցում,

գ) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և նրա ավանդական կազմակերպությունների համար որոշակի հարկային արտոնությունների սահմանում,

դ) միջազգայնորեն ընդունված արարողակարգային չափանիշներին և հայ ժողովրդի ազգային սովորույթներին ու ավանդույթներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական արարողակարգին համապատասխան Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սպասավորների մասնակցությամբ անցկացվող պետական արարողակարգային միջոցառումների իրականաց-

ման կարգի մշակում,

ե) ազգային կրթամշակութային, սոցիալական ապահովության, առողջապահության և հոգևոր ոլորտում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դերի և նշանակության կարևորում,

զ) պետական լրատվամիջոցներով և պետության կողմից իրականացվող միջոցառումների ժամանակ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմության, դավանաբանության քարոզչության և ուսուցման գերակայության ապահովում,

է) Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, զինծառայողների հոգևոր կյանքում և ռազմահայրենասիրական դաստիարակության գործում, ինչպես նաև քննչական մեկուսարաններում, ազատազրկման վայրերում, կալանավորների և դատապարտյալների շրջանում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու գործունեության հետադա ընդարձակում⁹:

Ինչպես տեսնում ենք, բոլոր այս դրույթները հետագայում հիմք հանդիսացան Հայաստանի Հանրապետությունում եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների իրավական կարգավորման համար, իսկ, թե ինչպես դա եղավ, կծանոթանանք հաջորդ օրերում:

Հաջորդ օրերը, որին անդրադառնալու ենք, «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքն է, որն ընդունվել է 2007 թվականի փետրվարի 22-ին և գործածության մեջ մտել մարտի 14-ից: Այն կարգավորում է Հայաստանի Հանրապետության և Հայ Առաքելական Եկեղեցու ոլորտները մի շարք ուղղություններով. սույն օրենքի 2-րդ հոդվածում նշվում է.

«1. Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ որպես ազգային եկեղեցի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին կենտրոնով, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունների նվիրապետական աթոռներով, և նրա բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:

2. Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ինքնակառավարումն իր նվիրապետության սահմաններում:¹⁰»:

Փաստորեն, ՀՀ Սահմանադրությամբ և 2007 թվականին ընդունված օրենքով խտրական դրսևորում չի համարվում Հայ Առաքելական Եկեղեցուն տրված «Ազգային» որակումը: Որպես կա-

նոն, Տ. Շահե վարդապետ Անանյանի հոդվածի մեջ, որը վերնագրված է «Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունը Հայաստանի Հանրապետությունում Հայաստանյայց Եկեղեցու տեղը, դերն ու օրենսդրական կարգավիճակը», հանդիպում ենք այն մտքին, որ Հայ Առաքելական Եկեղեցուն տրված «Ազգային» որակումը պարզապես ԵՄ երկրներում ընդունված՝ «Եկեղեցի-պետություն» փոխհարաբերության իրավաբանական դրսևորումն է: Այս իմաստով «ազգային» եզրն առավել մեծ է Սկանդինավյան երկրներում կիրառվող Folkekirken՝ «Ժողովրդական եկեղեցի» եզրին, որով հաշվի են առնվում տվյալ եկեղեցու պատմական, ազգային, մշակութային և քաղաքական դերն ու կարևորությունը երկրի կյանքում¹¹: Ընդհանուր ուսումնասիրության արդյունքում եկեղեցու՝ ազգային կամ պետական եկեղեցի լինելու հանգամանքը Հայաստանում շրջանառության մեջ է դրվում մի շարք թեզերի միջոցով: Նախ առաջինը՝ քրիստոնեությունը որպես պետական կրոն աշխարհում առաջինն ընդունելու հանգամանքն է, երկրորդը, որ եկեղեցին հայ ազգային ինքնության պահպանման երաշխավորն է և նրա գլխավոր նպատակներից մեկը հայապահպանությունն է, ահա թե ինչու Հայ Առաքելական Եկեղեցին «Ազգային եկեղեցի» է համարվում:

Այժմ անդրադառնանք «Հայաստանի Հանրապետության և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի մի քանի այլ դրույթների, որոնք վերլուծության ու առանձնակի ուսումնասիրության գիտական պահանջ են ներկայացնում՝ եկեղեցի-պետություն հարաբերությունների ներկայիս մոդելը Հայաստանի Հանրապետությունում հասկանալու և ըմբռնելու համար:

Այսպես, ազգային հոգևոր ու նյութական մշակութային արժեքների պետական պահպանման և փոխանցման շուրջ Հայ Առաքելական Եկեղեցին ու Հայաստանի Հանրապետությունը գտնվում են բարձր մակարդակի փոխհամաձայնության մեջ, վերոնշյալ օրենքի 5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածները հենց այդ համագործակցության իրավական հիմնավորումն են: 5-րդ հոդվածում մասնավորապես նշված է.

«1. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմական, հոգևոր, մշակութային և վավերագրական ժառանգությունը ազգային ինքնության հենքի կարևոր և անբաժանելի մասն է:

2. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմական, հոգևոր, մշակութային և վավերագրական արժեքների՝ պետական սեփականություն հանդիսացող հատվածը կարող է օտարվել կամ պահպանման վայրից փոխադրվել՝ այդ մա-

սին նախապես տեղեկացնելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն: Այդ արժեքների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ խորհրդակցելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետ¹²: Այսինքն, պետության համար կարևոր դիմագիծ հանդիսացող մշակութային արժեքների ու ժառանգության պահպանումը, փոխանցումն ու ներկայացումն իրականացվում է Հայ Առաքելական Եկեղեցու ու Հայաստանի Հանրապետության եկեղեցապետական համագործակցության պայմաններում և մակարդակում:»:

Մշակութային ժառանգության պահպանման ու ներկայացման լավագույն համագործակցության օրինակ է նաև վերոնշյալ «Հայաստանի Հանրապետության և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետը, որտեղ նշված է. «Պատմական հուշարձանի կարգավիճակ ունեցող եկեղեցիների և պաշտամունքային այլ շինությունների պահպանությունը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին և Հայաստանի Հանրապետությունն իրականացնում են համատեղ»¹³: Մշակութային հաստատությունների մասին է սույն օրենքի 7-րդ հոդվածը, որտեղ մասնավորապես նշված է. «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սեփականությունը և ազգային մշակութային ժառանգության բաղկացուցիչ մասը հանդիսացող մշակութային հաստատությունների, հավաքածուների, թանգարանների, գրադարանների, արխիվների պահպանության և հարստացման համար պետական աջակցության ծավալն ու նպատակը Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է տվյալ տարվա պետական բյուջեի նախագծով՝ նախապես այն քննարկելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետ:»¹⁴: Այս հոդվածներից կարող ենք փաստել, որ հայ եկեղեցու և Հայաստանի Հանրապետության հարաբերությունները տեղավորվում են եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների համագործակցային մոդելի շրջանակներում:

Հաջորդ կարևորագույն ոլորտը, որտեղ ծավալվում է եկեղեցու և պետության համագործակցության շրջանակը, իրենից ներկայացնում է կրթական ոլորտը: «Հայաստանի Հանրապետության և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը ներկայացնում է եկեղեցու դերակատարությունը կրթական ոլորտում: Հոդվածում մասնավորապես անդրադարձ է կատարվում եկեղեցու և կրթական ոլորտի հարաբերությունների հետևյալ դրույթներին՝

րին՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իրավունք ունի՝

1) հիմնելու կամ հովանավորելու նախադպրոցական հաստատություններ, տարրական, միջնակարգ և ավագ դպրոցներ, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում: Վստահաբար կարող ենք նշել, որ այս դրույթը սերտացնում է եկեղեցու և պետության ինստիտուտների փոխհամագործակցության շրջանակը մարդու, պետության, քաղաքացիական հասարակության կայացման համար կենսական այնպիսի ոլորտում, ինչպիսին է կրթական ոլորտը:

2) Մասնակցելու պետական կրթական հաստատություններում «Հայ Եկեղեցու պատմություն» առարկայի ուսումնական ծրագրի և դասագրքի մշակմանը, այն դասավանդող ուսուցիչների որակավորման պահանջների սահմանմանը և դպրոցներին ներկայացնելու այդ ուսուցիչների թեկնածությունները¹⁵: Այս առումով հատկանշական էր 2002 թվականի Հայ Առաքելական Եկեղեցու և ՀՀ կառավարության միջև կնքված համաձայնագիրը, որտեղ մասնավորապես նշված էր. «Կարևորելով Հայոց պետականության զարգացման և ամրապնդման գործում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դերն ու նշանակությունը, նաև նկատի ունենալով հայ ժողովրդի հոգևոր, կրթամշակութային կյանքում և ազգապահպանման գործում նրա ունեցած բացառիկ նշանակությունը և նպատակ ունենալով հանրակրթական հիմնական և ավագ դպրոցների դասարաններում իրականացնել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմության դասավանդումը...»¹⁶: Այս համաձայնագիրը բազմակողմ համագործակցության հրաշալի օրինակ էր Հայ Առաքելական Եկեղեցու և Հայաստանի Հանրապետության միջև, քանի որ ծրագրի գիտամեթոդաբանական ղեկավարումը պետք է իրականացներ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, իսկ դասագրքերի ֆինանսավորումը, հրատարակումը, մշակումը պետք է իրականացներ Հայ Առաքելական Եկեղեցին:

3) Պետական կրթական հաստատություններում կամավոր ուսումնական դասընթացներ կազմակերպելու՝ օգտագործելով դրանց շենքերն ու ռեսուրսները՝ այդ հաստատությունների հետ համաձայնեցնելով դասընթացների իրականացմանն առնչվող խնդիրները¹⁷: Այս դրույթով փաստացի եկեղեցին ակտիվ ներգրավվում է կրթական ոլորտի մի շարք հիմնախնդիրների ու հիմնահարցերի մշակման ու համակարգման մեջ:

Այս կետերի հետ համատեղ, հատկանշական

ենք համարում շեշտել, որ «Հայաստանի Հանրապետության և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում նշված է նաև՝

«1. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ստեղծած ուսումնական հաստատությունները պետք է ստանան այն աջակցությունը, որը պետությունը ցուցաբերում է մասնավոր հաստատություններին:

2. Պետությունը երաշխավորում է կրոնական կրթության իրավունքի իրացումը՝ կամավորության հիման վրա:

3. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պաշտոնական հաղորդագրությունները զանգվածային լրատվության միջոցները հրապարակում են անփոփոխ՝»:

ՀՀ եկեղեցի-պետություն մոդելի ուսումնասիրության մեջ հատկանշական է նաև «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը, որտեղ մասնավորապես նշվում է. «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իրավունք ունի ունենալու մշտական հոգևոր ներկայացուցիչ հիվանդանոցներում, մանկատներում, տուն-ինտերնատներում, զորամասերում, ազատագրկման վայրերում, ներառյալ՝ քննչական մեկուսարաններում:»:

Վերոնշյալ օրենքի հաջորդ հոդվածը, որում, ըստ մեզ, պետությունը հովանավոր ու սատար է կանգնում եկեղեցուն 13-րդ հոդվածն է, որտեղ մասնավորապես նշված է. «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, որպես ազգային եկեղեցի, որը գործում է նաև այլ երկրներում, գտնվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո՝ միջազգային իրավական նորմերին համապատասխան:»¹⁹:

Ամփոփելով եկեղեցի-պետություն փոխհարաբերության իրավական կարգավորման հիմնահարցը Հայաստանում՝ նպատակահարմար ենք համարում ընդգծել, որ իր հասարակական-քաղաքական նշանակությամբ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին որոշիչ տեղ է զբաղեցնում պետանկեղեցական հարաբերությունների համակարգում, Հայ Առաքելական Եկեղեցին ու Հայաստանի Հանրապետությունը գտնվում են բարձր մակարդակի իրավական փոխհամաձայնության մեջ, որը, սակայն, մեր կարծիքով, շարունակական կատարելագործման կարիք ունի:

Հարկ է ընդգծել, որ շատ երկրների պետանկեղեցական հարաբերությունների տեսակը որոշելիս անխուսափելիորեն անհրաժեշտ է հաշվի առնել ոչ

միայն ֆորմալ իրավական բնորոշումները, այլև բազմաթիվ այլ գործոններ, հակառակ դեպքում՝ ուսումնասիրությունը կլինի թերի և չի արտացոլի պետանկեղեցական հարաբերությունների իրական պատկերը, այսինքն՝ եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների իրավական կարգավորման հիմնահարցը անհրաժեշտ, սակայն միակ հիմքը չէ մոդելի մասին պատկերացում կազմելու համար:

Պատմական փորձը, դարեր շարունակ հայ ժողովրդի կյանքում իրականացրած առանձնահատուկ գործառնությունները, խորհրդային տարիների կորուստները վերականգնելու ցանկությունը դրդում են Եկեղեցու հոգևոր դասին ձևավորել պետանկեղեցական հարաբերությունների մի համակարգ, որը թույլ կտա եկեղեցուն խաղալ այնպիսի համաժողովրդական ինստիտուտի դեր, որը ոչ միայն արձագանքում է հայության հոգևոր պահանջմունքներին, այլև միաբանում է նրանց իր հովանու ներքո՝ իրականացնելով պետական եկեղեցու ֆունկցիաներ: Ուստի իրավական դաշտը եկեղեցուն տալիս է այդ հնարավորությունը՝ օրենքով չարգելելու պայմանով նաև, որպես կանոն մենք առանձին անդրադարձանք տարբեր ոլորտներում եկեղեցու ներգրավվածություն հիմնահարցին:

¹ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 17-րդ, 18-րդ հոդվածներ:

² Տե՛ս, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախաբան:

³ Տե՛ս, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածը հռչակում է. «Սույն կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից:»:

⁴ Տե՛ս, «ՀՀ խղճի ազատության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանում գործող վեց կրոնական կազմակերպությունների առաջարկ-նախագիծը, «Կրոն և հասարակություն» ամսագիր, Երևան, 2008, թիվ 3, էջ 78:

⁵ Տե՛ս, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված:

⁶ Տե՛ս, նույն տեղում, 17-րդ հոդվածի գ) կետ:

⁷ Տե՛ս, ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 8.1-րդ հոդված:

⁸ Տե՛ս, ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 17-րդ հոդված:

⁹ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև մտադրությունների հուշագիր, https://www.gov.am/u_files/file/kron/mtadrutyunneri%20hushagir.pdf.

¹⁰ Տե՛ս, «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված:

¹¹ Տե՛ս, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին և ՀՀ օրենսդրությունը, (քննարկման նյութեր) Սք. Էջմիածին 2013, էջեր 7-17:

¹² Տե՛ս, «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված:

¹³ Տե՛ս, նույն տեղում, 6-րդ հոդված:

¹⁴ Տե՛ս, նույն տեղում, 7-րդ հոդված:

¹⁵ Տե՛ս, նույն տեղում, 8-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետեր:

¹⁶ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև 2002 թվականի օգոստոսի 22-ին կնքված համաձայնագիր https://www.e-gov.am/u_files/file/kron/1d%20Hamadzaynagir.pdf.

¹⁷ Տե՛ս, «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետ:

¹⁸ Տե՛ս, նույն տեղում, 8-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետեր:

¹⁹ Տե՛ս, նույն տեղում, 13-րդ հոդված:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն:

2. «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենք:

3. «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև մտադրությունների հուշագիր:

5. Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև 2002 թվականի օգոստոսի 22-ին կնքված Համաձայնագիր:

6. Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա:

Տիրանուշ Մելիկյան

Преподаватель кафедры политических институтов и процессов ЕГУ,
аспирант

РЕЗЮМЕ

Вопрос юридического урегулирования церковно-государственных
отношений в Республике Армения

В данной статье рассматривается проблема правового регулирования церковно-государственных отношений в Республике Армения. Вопрос правового регулирования церковно-государственных отношений является предметом крупного исследования, имеющего большое значение для изучения государственно-церковных отношений в армянской модели и процессах.

Ключевые слова - церковь, государство, конституция, право, религиозная организация, формат, правовое регулирование.

Siranush Melikyan

Lecturer of the Chair of Political Institutions and Processes YSU
PHD student

SUMMARY

Issue of church-state legal relations in the Republic of Armenia

This article presents the issue of legal regulation of church-state relations in the Republic of Armenia. The issue of legal regulation of church-state relations is the subject of the most important study that is of great importance for the study of state-church relations in the Armenian model and processes.

Key words - church, state, constitution, law, religious organization, format, legal regulation.

Բնագիրը ներկայացվել է 20.09.2019թ.

Ընդունվել է տպագրության 16.10.2019թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է) քաղաքական
գիտությունների դոկ., պրոֆեսոր Գ. Քեռյանը

НАТАЛЬЯ БАЙДОВА

Доцент кафедры экономики и менеджмента
Академии ФСИН России,
полковник внутренней службы

ОЛЬГА ГРИШИНА

Преподаватель кафедры экономики и менеджмента
Академии ФСИН России,
майор внутренней службы

ЭДГАР БАЛЯН

Майор внутренней службы в отставке

АРМЕН ОГАНЯН

Заместитель директора по правовым и учебным
вопросам- ученый секретарь ГНКО «Центр
правового образования и осуществления
реабилитационных программ»

НОРМАТИВНО-ПРАВОВОЕ ОБЕСПЕЧЕНИЕ ТРУДОВОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ОСУЖДЕННЫХ В ПЕНИТЕНЦИАРНЫХ СЛУЖБАХ РОССИИ И АРМЕНИИ

В контексте современных практических правовых решений в статье рассматриваются аспекты нормативно-правового обеспечения трудовой деятельности осужденных в пенитенциарных службах России и Армении

Ключевые слова: нормативно-правовое обеспечение труда заключенных, пенитенциарная служба, исправительное учреждение, реализация уголовно-исполнительной политики.

Нормативно-правовые основы обеспечения трудовой деятельности осужденных в России закреплены в уголовно-исполнительном кодексе РФ, Трудовом кодексе РФ, в Законе «Об учреждениях и органах, исполняющих уголовные наказания в виде лишения свободы» и в других нормативных документах [1, 2, 3, 4, 5].

В соответствии с главой 14 УИК РФ осужденные, отбывающие наказание в исправительных учреждениях, с учетом трудоспособности и, по возможности, специальности привлекаются к оплачиваемому труду [4]:

1. В центрах трудовой адаптации осужденных и производственных (трудовых) мастерских исправительных учреждений.

Центры трудовой адаптации осужденных базируются на предприятиях исправительных колоний, а учебно-производственные (трудовые) и лечебно-производственные (трудовые) мастерские - соответственно на базе предприятий воспитательных колоний и лечебных исправительных учреждений.

2. На федеральных государственных унитар-

ных предприятиях уголовно-исполнительной системы.

Указанные предприятия учреждений, исполняющих наказания, предназначены для привлечения осужденных к труду и обучения их востребованным профессиям и создаются при одном учреждении, исполняющем наказания, или объединении учреждений с особыми условиями хозяйственной деятельности как структурные подразделения этих учреждений или их объединения.

3. На объектах организаций иных организационно-правовых форм, расположенных на территориях исправительных учреждений и (или) вне их, при условии обеспечения надлежащей охраны и изоляции осужденных.

Следует отметить, что ограниченные финансовые, ресурсные и иные возможности УИС не позволяют создавать дополнительные рабочие места для эффективного трудового устройства осужденных. В связи с этим привлечение к труду осуществляется на основе договора, заключаемого руководством учреждений, исполняющих наказания,

и организаций, в которых обеспечивается занятость осужденных.

В ряде случаев законодательство прямо запрещает привлекать осужденных к труду по имеющейся у них специальности, например когда приговором суда осужденному назначено дополнительное наказание в виде лишения права занимать определенные должности или заниматься определенной деятельностью.

В соответствии с ч. 4 ст. УИК РФ видов работ, на которые запрещается привлекать осужденных, устанавливаются правилами внутреннего трудового распорядка исправительных учреждений, а именно [4]:

- На всех работах и должностях в управлениях, отделах (службах) территориальных органов уголовно-исполнительной системы; в административных зданиях, в которых размещается личный состав, осуществляющий охрану учреждений, находится (хранится) оружие, служебная документация, специальные технические средства.

Кроме этого, не допускается труд осужденных:

- по обслуживанию и ремонту технических средств охраны и надзора, а также размещенных в запретной зоне инженерных сооружений, конструкций и коммуникаций;
- с множительной, радиотелеграфной, телефонной, факсимильной техникой;
- связанный с учетом, хранением и выдачей медикаментов, взрывчатых, отравляющих и ядовитых веществ;
- с подчинением им вольнонаемных работников;
- в качестве водителей оперативных машин;
- в качестве продавцов, бухгалтеров-операционистов, кассиров, заведующих продовольственными, вещевыми складами, а также складами со сложным и дорогостоящим оборудованием, кладовщиков.

Привлечение осужденных к труду в различных видах исправительных учреждений имеет свои особенности. В частности, осужденные, отбывающие лишение свободы в тюрьмах, не могут привлекаться к труду на предприятиях, расположенных вне территории исправительного учреждения, их труд организуется только на территории тюрьмы.

Труд подозреваемых и обвиняемых организуется только на территории СИЗО в камерах, на производственных площадях, в мастерских и на ремонтно-строительных работах. При этом обеспечивается выполнение установленных требований изоляции и правил раздельного размещения подозреваемых и обвиняемых, установленных федеральным законом, а также норм гражданского и

трудового законодательства, правил техники безопасности при производстве работ, норм санитарии и гигиены.

Таким образом, чем строже режим исправительного учреждения, тем уже круг работ, к которым может быть привлечен осужденный, тем суровее его условия труда. Так в колонии-поселении осужденный с разрешения администрации может трудиться за пределами колонии, т.е. в определенных пределах сам выбирает себе работу, напротив осужденные, находящиеся в колониях особого режима, используются преимущественно на тяжелых физических работах.

Нормативно-правовое регулирование трудовой деятельности осужденных к лишению свободы в Республике Армения осуществляется в соответствии с главой 16 уголовно-исполнительного кодекса Республики Армения.

Так, в соответствии со ст.85 уголовно-исполнительного кодекса Республики Армения осужденный по возможности обеспечивается работой или ему предоставляется право самому обеспечить себя работой, порядок и условия которой устанавливаются внутренним режимом исправительных учреждений [7].

При привлечении осужденного к труду, администрация исправительного учреждения обязана принять во внимание его пол, возраст, трудоспособность, состояние здоровья и, по возможности, профессию. Трудовая деятельность осужденного не должна препятствовать осуществлению исправительным учреждением поставленных перед ним задач.

Перечень запрещенных осужденному работ устанавливается Правительством Республики Армения [8].

В соответствии с законодательством Республики Армения осужденный имеет право на оплату своего труда [6]. При этом месячная оплата труда осужденного не может быть меньше установленной минимальной заработной платы (ст. 87 уголовно-исполнительного кодекса Республики Армения) [7].

Лица, осужденные к лишению свободы, в соответствии со ст. 88 уголовно-исполнительного кодекса Республики Армения, могут быть привлечены к работам по благоустройству исправительного учреждения или прилегающих к нему территорий без оплаты, согласно Постановления начальника исправительного учреждения. При этом, осужденный привлекается к неоплачиваемым работам в порядке очередности, не в часы отдыха, на время не свыше двух часов в день. Запрещено привлекать к неоплачиваемым работам осужденных, являющихся ин-

валидами первой или второй группы, достигшими пенсионного возраста, а также осужденных беременных женщин.

Большую роль в обеспечении трудовой занятости лиц, лишенных свободы, играет фонд «Содействие заключенному». В уставе Фонда закреплено, что обеспечение трудовой занятости осужденных является одной из основных целей деятельности Фонда.

Фонд «Содействие заключенному» имеет магазин-навивильон, где продаются творческие работы, выполненные осужденными, содержащимися в уголовно-исполнительных учреждениях Республики Армения. Вырученные денежные средства от продажи творческих работ осужденных, направляются в соответствующее уголовно-исполнительное учреждение Республики Армения на расчетный счет данного осужденного, либо передаются членам его семьи.

Фонд «Содействие заключенному» также поддерживает осужденных, желающих приобрести новые профессии. Фонд перечисляет соответствующим учебным заведениям денежные средства за обучающихся осужденных. Заключаются также договоры на проведение курсов для осужденных. Для осужденных проводятся двухмесячные или трехмесячные профессиональные курсы, по окончании которых предоставляются документы госу-

дарственного образца.

Таким образом, анализируя вышеизложенное, следует отметить, что привлечение осужденных к труду является одной из основных мер реализации уголовно-исполнительной политики современного государства. Уголовно-исполнительным законодательством РФ провозглашен принцип обязательности труда для осужденных, а труд отнесен к числу основных средств их исправления. При этом вовлечение осужденного в трудовую деятельность - есть не принуждение его к труду, а способ включения его в социально значимые отношения, способствующие его исправлению и бухгалтеров-операционистов поведению в период отбывания наказания, а также морально-психологической и трудовой ресоциализации после освобождения. Поэтому трудовой деятельности осужденных в России и Армении уделяется пристальное внимание. Нормативно-правовые основы обеспечения трудовой деятельности осужденных закреплены на государственном уровне в соответствующих нормативных документах и являются обязательными к исполнению.

Список литературы:

1. Конституция Российской Федерации (принята всенародным голосованием 12.12.1993) (с учетом поправок, внесенных Законами РФ о поправках к Конституции РФ от 30.12.2008 N6-ФКЗ, от 30.12.2008 N7-ФКЗ, от 05.02.2014 N2-ФЗ, от 21.07.2014 N11-ФКЗ). - Режим доступа: <http://www.pravo.gov.ru>.
2. Трудовой кодекс Российской Федерации: федер. Закон: [от 30 декабря 2001 г. N197-ФЗ] // Официальный интернет-портал правовой информации [Электронный ресурс]. - Режим доступа: <http://www.pravo.gov.ru>.
3. Уголовный кодекс Российской Федерации: федер. Закон: [от 13.06.1996 N63-ФЗ] // Официальный интернет-портал правовой информации [Электронный ресурс]. - Режим доступа: <http://www.pravo.gov.ru>.
4. Уголовно-исполнительный кодекс Российской Федерации: федер. Закон: [от 08.01.1997 N1-ФЗ] // Официальный интернет-портал правовой информации [Электронный ресурс]. - Режим доступа: <http://www.pravo.gov.ru>.
5. Об учреждениях и органах, исполняющих уголовные наказания в виде лишения свободы: федер. Закон РФ [от 21 июля 1993г. N5473-1-ФЗ] // Официальный интернет-портал правовой информации [Электронный ресурс]. - Режим доступа: <http://www.pravo.gov.ru>.
6. Конституция Республики Армения // Официальный интернет-портал парламента Республики Армения [Электронный ресурс]. - Режим доступа: <http://www.parliament.am/>
7. Уголовно-исполнительный кодекс Республики Армения: Закон Республики Армения [от 18.01.2005 г. N ЗР-60 (ред. От 12.07.2018)] // Официальный интернет-портал парламента Республики Армения [Электронный ресурс]. - Режим доступа: <http://www.parliament.am/>
8. Об уголовно-исполнительной службе: Закон Республики Армения [от 08.07.2005 г N ЗР-160] // Официальный интернет-портал парламента Республики Армения [Электронный ресурс]. - Режим доступа: <http://www.parliament.am/>

Նատալյա Բայդովա

Ռուսաստանի պատիժների իրականացման Դաշնային ծառայության իրավունքի և կառավարման ակադեմիայի տնտեսագիտության և կառավարման ամբիոնի դոցենտ, ներքին ծառայության գնդապետ

Օլգա Գրիշինա

Ռուսաստանի պատիժների իրականացման Դաշնային ծառայության իրավունքի և կառավարման ակադեմիայի տնտեսագիտության և կառավարման ամբիոնի դասախոս, ներքին ծառայության մայոր

Էդգար Բալյան

Ներքին ծառայության մայոր (պաշտոնաթող)

Արմեն Օհանյան

«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ տնօրենի իրավական և ուսումնական հարցերով տեղակալ- գիտական քարտուղար

ԱՄՓՈՓՈՒՄ

Դատապարտյալների աշխատանքային գործունեության նորմատիվ-իրավական ապահովումը Հայաստանի և Ռուսաստանի քրեակատարողական ծառայություններում

Հոդվածի շրջանակներում քննության են առնվում Հայաստանի և Ռուսաստանի քրեակատարողական ծառայություններում դատապարտյալների աշխատանքային գործունեության նորմատիվ-իրավական ապահովման ասպեկտները՝ ներկայիս պրակտիկ-իրավական լուծումների համատեքստում:

Հիմնաբառեր- դատապարտյալների աշխատանքի նորմատիվ-իրավական ապահովում, քրեակատարողական ծառայություն, ուղղիչ հիմնարկ, քրեակատարողական քաղաքականության իրականացում:

Natalya Baidova

The Associate Professor of the Chair of Economics and Management of the Academy of Law Management of the Federal Penitentiary Service of Russia /The Academy of the FPS of Russia/, Colonel of the Internal Service

Olga Grishina

Lecturer of the Chair of Economics and Management Academy of Law Management of the Federal Penitentiary Service of Russia /The Academy of the FPS of Russia/

Edgar Balyan

A retired internal service major

Armen Ohanyan

Deputy Director - Scientific Secretary of «Legal Education and Rehabilitation Programs' Implementation Center» SNCO.

SUMMARY

The Regulatory and Legal Support of the Labor Activity of Convicts in the Penitentiary Services of Russia and Armenia

In the context of modern practical legal decisions, the article considers aspects of the regulatory and legal support of the labor activity of convicts in the penitentiary service of Russia and Armenia.

Key words: *regulatory and legal support of the labor of prisoners, penitentiary service, correctional institution, implementation of the criminal executive policy.*

Բնագիրը ներկայացվել է 18.09.2019թ.

Ընդունվել է տպագրության 01.10.2019թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է) տնտեսական գիտությունների դոկ., պրոֆեսոր Ա. Ռադիոնովը